ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Պատմության և միջազգային
հարաբերությունների ամբիոն

# ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ – 2020-2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԲԱԺԻՆ I.

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ....4

1. Ընդհանուր դրույթներ....5
2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը....5
   - *2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները*....5
   - *2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները*....8
   - *2.3. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը*....9
3. Դասընթացները և կրթական մոդուլները....10
4. Կրեդիտների հատկացումը....10
5. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները....11
6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը....11
   - *6.1. Համակարգի հիմնադրույթները*....11
   - *6.2. Գնահատման մեթոդաբանությունը*....13
   - *6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը*....16
   - *6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը*....17
   - *6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը*....17
   - *6.6. Ուսման առաջադիմությունը*....20
7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը....21
8. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը....23
9. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը....24
10. Դասընթացների տեղեկագիրքը....25
11. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը....26
12. Կրեդիտների փոխանցումը....28
13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը....29
14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները....30
15. Եզրափակիչ դրույթներ....31

ԲԱԺԻՆ II.

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ....32

Մաս I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ....32

1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը....33
2. Ծրագրի բովանդակությունը....34
   - 2.1. *Ուսումնական կառուցամաս*....34
   - 2.2. *Հետազոտական կառուցամաս*....37

Մաս II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ....39

1. Տեղեկագրքի նպատակը....40
2. Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ....41
3. Լրացական դասընթացներ....43
4. Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ....47
5. Կամընտրական դասընթացներ....75

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....92

# I ԲԱԺԻՆ

## ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ (այսուհետ՝ Կենտրոն) հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:

1.2. Կարգը ներառում է հեռակա ուսուցման ձևով մագիստրոսի պատրաստման ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը:

1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:

## 2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը

### *2.1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները*

Համաեվրոպական ECTS[1] կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են Կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրում:

1. *Կարողությունը* գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր:

2. *Կրթական արդյունքն* այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և

[1] Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

3. *Կրթական (ուսումնական) մոդուլը* ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

4. *ECTS կրեդիտը* դասընթացն (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

5*. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.*

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման միավորների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
- կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

6. *Կրեդիտային համակարգը* ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

7. *Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը* միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 48 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

8. *ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.*

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

*2.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները*

2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են՝

ա) *կրեդիտների փոխանցում.*

այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

բ) *կրեդիտների կուտակում.*

այս գործառույթի իրականացումը ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի ուսումնառության անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ:

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

2.2.2. *Կրեդիտների փոխանցման* գործառույթի հիմնական հատկանիշներն են.

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ,կրթական մոդուլներ, ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք)արտահայտող ECTS կրեդիտներով,
- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

2.2.3. *Կրեդիտների կուտակման գործառույթի* հիմնական հատկանիշներն են.

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,

- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ)դասախոսի նախապատվությունից,
- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

**2.3.** ***Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը***

1. Կենտրոնում մագիստրոսի կրթական աստիճաններում հեռակա ուսուցման համակարգի ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է միջինը 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի տևողությունը կազմում է 2.5 տարի (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որից 3 շաբաթը հատկացվում է տեսական ուսուցման, 9-ը՝ ինքնուրույն աշխատանքի և կոնսուլտացիաների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լսարանային լրիվ բեռնվածությունը առնվազն 24 ժամ է[2] :
5. Հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա առնվազն 22-26, առավելագույնը՝ 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, իսկ մեկ ուսումնական տարում՝ 48 կրեդիտ:
6. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:
7. Մագիստրոսի՝ 2,5 տարի ուսման տևողության դեպքում կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 120 կրեդիտ է, և առնվազն 96 կրեդիտ՝ 2 տարի ուսման տևողության դեպքում :

[2] Առանց լրացական դասընթացների

**3. Դասընթացները և կրթական մոդուլները**

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝

ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,

բ) կամընտրական դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակն ամրագրված է մագիստրոսական ծրագրում, ուսանողը դրանք ընտրում է առաջարկվող ցանկից:

**4. Կրեդիտների հատկացումը**

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով:

5. **Կրթական ծրագրերի ավարտական պահանջները**

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար Կենտրոնի ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն՝ 2,5 տարի ուսման տևողությամբ և առնվազն 96 կրեդիտ՝ 2 տարի ուսման տևողությամբ:
2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնվազն 6 կրեդիտ՝ *ընդհանուր դասընթացների կրթամասից*, 2,5 տարի ուսման տևողությամբ՝ 48 կրեդիտ և առնվազն 42 կրեդիտ՝ 2 տարի ուսման տևողությամբ՝ *հետազոտական կառուցամասից /ներառյալ՝ մագիստրոսական թեզը/*:
3. Մնացած կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է մասնագիտական պարտադիր կրթամասով և կամընտրական դասընթացներով՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր ծրագրի համար տրվում է առանձին (ընդ որում, մինչև 18 կրեդիտ հատկացվում է կամընտրական դասընթացների ձևով որոշակի ուղղությամբ անհատական ուսուցում իրականացնելու համար):

## 6. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

### *6.1. Համակարգի հիմնադրույթները*

1. Կենտրոնում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն

աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում՝ հաշվի առնելով դասահաճախումները և մասնակցության ակտիվությունը,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ, թեստեր, նախագծեր, անհատական աշխատանքներ և այլն),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և

կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ*,

բ) *առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ*։

6.2. Գնահատման մեթոդաբանությունը

6.2.1. Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված բոլոր դասընթացները եզրափակիչ գնահատումով դասընթացներ են:

1. Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն, որոնցից առնվազն մեկն անց է կացվում ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա: Եզրափակիչ քննության ձևը դասընթացը կազմակերպող դասախոսի առաջարկությամբ հաստատում է ամբիոնի վարիչը:
2. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ($Գ_{արդ.}$) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության ակտիվության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Գ_{մաս.}$ միավորը որոշվում ***աղյուսակ 1-ում*** բերված սանդղակի չափանիշներին համապատասխան (ուսումնառության անհատական ժամանակացույցով սովորող ուսանողի՝ դասընթացի մասնակցության համար տրվող միավորների քանակը հաշվարկվում է նրա ինքնուրույն աշխատանքի կատարողականի հիման վրա).

*Աղյուսակ 1.*

| Մասնակցության աստիճանը (%) | Հատկացվող միավորը |
|---|---|

| | |
|---|---|
| 91-100 | 2 |
| 81-90 | 1,5 |
| 71-80 | 1 |
| 61-70 | 0,5 |
| <60 | 0 |

*Օրինակ 1. Եթե 12 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 5 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝*

**[ 1- 5/12 ] x 100% = (1-0.42) x 100% = 58%**

*Համաձայն աղյուսակի՝ Գմաս. = 0 միավոր:*

գգ

*Օրինակ 2. Եթե 24 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 3 ժամ անհարգելի և 2 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝* ***[ 1- 3/2 4-2] x 100% = (1- 0,14) x 100% = 86%*** *Համաձայն աղյուսակի՝ Գմաս. = 1,5 միավոր:*

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների (գրավոր աշխատանք և բանավոր ներկայացում), կամ 1 ընթացիկ (միջանկյալ) և անհատական աշխատանք կամ թեստ[3] արդյունքներից ($\Sigma Ք_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր.

գ) եզրափակիչ քննության արդյունքից ($Ք_{եզր.}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + \Sigma Ք_{ընթ.} + Ք_{եզր.}:$$

Ըստ այդմ, մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով) [4].

*Աղյուսակ 2.*

| Գնահատման բաղադրամասը | $Գ_{մաս.}$ | $Ք_{ընթ.}1$ | $Ք_{ընթ.}2$ | $Ք_{եզր.}$ | $Գ_{արդ.}$ |
|---|---|---|---|---|---|

[3] Թեստային առաջադրանքի գնահատման քայլը առնվազն 0,1 միավոր

[4] Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0.5 է

| | | | | |
|---|---|---|---|---|
| Միավորը | 2 | 8 | 10 | 20 |

3. Ընթացիկ գնահատման ձևերի միջև միավորների բաշխման քանակական հարաբերակցությունը որոշում է դասընթացը վարող դասախոսը, ինչը պարտադիր կերպով արձանագրվում է մագիստրոսական ծրագրի ուսանողի ուսումնառության ուղեցույցում զետեղված դասընթացի նկարագրության մեջ (դասընթացի ընթացիկ գնահատման կառուցվածքի փոփոխություն ուղեցույցի հրապարակումից հետո չի թույլատրվում):
4. Գնահատման վերը նկարագրված եղանակը կիրառվում է միայն ուսումնական կառուցամասի բաղկացուցիչ դասընթացների (բացի լրացական դասընթացներից) գնահատման համար: Հետազոտական կառուցամասի մոդուլները, այդ թվում նաև պրակտիկաները, գնահատվում են ստուգարքի ձևով: Մագիստրոսական ատենախոսությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով՝ սույն կարգում բերված գնահատման չափանիշներին համապատասխան:

### *6.3. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը*

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ամբիոնները, և հաստատում է ուսումնական մասի պետը: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական մաս:
3. Ընթացիկ քննությունները կամ դրանց հավասարեցված առաջադրանքները անց են կացվում ուսումնառության կիսամյակի 4÷5-րդ և մինչև 11-րդ շաբաթներում տվյալ առարկան դասավանդող դասախոսի կողմից (դասերից դուրս) :
4. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջանում՝ 15 ÷16-րդ շաբաթներում:
5. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է ամբիոն:

6. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն զանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև՝ ուսումնական մասի պետին:

### *6.4. Գնահատման սանդղակը և նշագրումը*

1. Կենտրոնում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 3.

| Գնահատման արդյունարար միավորը | Գնահատականը |
|---|---|
| 18-20 | «Գերազանց» |
| 13-17 | «Լավ» |
| 8-12 | «Բավարար» |
| 0-7 | «Անբավարար» |
| 0 | Չներկայացած |
| - | «Ստուգված»/ «Չստուգված» |

Դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «Չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) վրա:

### *6.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը*

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար Կենտրոնի ուսումնական մասը, ամբիոնի հետ համատեղ յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են *ակադեմիական տեղեկագիր*[5], որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները[6]

- *գումարային կրեդիտների* քանակը,
- *գնահատված կրեդիտների* քանակը,
- *վարկանիշային միավորները*,
- *միջին որակական գնահատականը*:

4. *Գումարային կրեդիտը* (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

---

[5] Ակադեմիական տեղեկագրի օրինակն կցված է սույն կարգին (հավելված 3):

[6] Տե՛ս հավելված 3 ակադեմիական տեղեկագիրը:

5. *Գնահատված կրեդիտը* (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

**ԳԿ=Σ Կրեդիտ :**

6. *Վարկանիշային միավորը* (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

**ՎՄ=(Σ Կրեդիտ x $Գ_{արդ}$):**

որտեղ $Գ_{արդ}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

*Օրինակ, եթե ուսանողը 5,4, և 6 կրեդիտանոց դասընթացից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12,16, և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝*

***ՎՄ= 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238՝300** հնարավորից **( 5 x 20 + 4x 20 + 6 x 20 )***

7. *Միջին որակական գնահատականը* (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

***ՄՈԳ= ՎՄ/ ԳԿ***

*Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝*

***ՄՈԳ= 238/15 = 15,87***

*20 հնարավորից:*

8. Հաշվառում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

### *6.6. Ուսման առաջադիմությունը*

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող*, *փորձաշրջանի կարգավիճակում գտնվող* և *հեռացման ենթակա* :
2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝

ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն(10% թույլատրելի շեղումով),

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների[7] կրեդիտները:

3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և տնօրինության կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):
4. *Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող* ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և

[7] Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:

5. Մագիստրոսի ծրագրում ուսանողին կարող է տրվել նաև լրացուցիչ ժամանակ՝ դասընթացը կրկնելու համար:
6. *Փորձաշրջանի կարգավիճակում* գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:
7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներինը՝ վարկանիշային միավորներով:

## 7. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնական մասում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:
3. Ընթացիկ (միջանկյալ) քննությունների կամ ստուգումների արդյունքների վերահանձնում, այդ թվում նաև ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում, չի թույլատրվում:
4. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունը/ստուգումն ընկած ժամանակահատվածում (համապատասխանաբար, 2-րդ ընթացիկ քննությունը՝ մինչև եզրափակիչ քննությունը, իսկ 2-րդ ընթացիկ ստուգումը՝ մինչև քննաշրջանի սկիզբը)՝ նախապես այն համաձայնեցնելով ուսումնական մասի և դասընթացը վարող դասախոսի հետ:

5. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:
6. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

*Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝*

$$\textit{Գ}_{արդ.} = 2 + 1 + 2 + 2 = 7,$$

*որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա*

$$\textit{Գ}_{արդ.} = 7 + (5 - 2) = 10:$$

7. Եթե մագիստրոսական ծրագրում դասընթացի գնահատման արդյունարար միավորը գտնվում է 5÷7 միավորի տիրույթում, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում նախորդ կետում բերված պահանջներին համապատասխան, ընդ որում՝ նույն կիսամյակի ընթացքում ուսանողն ունի յուրաքանչյուր այդպիսի

դասընթաց վերահանձնելու ընդամենը մեկ հնարավորություն՝ առաջին լուծարքային շրջանում 4 միավոր և ցածր արդյունք ցուցաբերած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողը պարտավոր է կրկնել դասընթացը:

8. Ուսումնառության 1÷2-րդ կիսամյակներում՝ 2,5 տարի ուսման տևողությամբ և 1-ին կիսամյակում՝ 2 տարի ուսման տևողությամբ մինչև 12 կրեդիտ ծավալով դասընթացներ չհանձնած մագիստրոսական ծրագրով սովորող ուսանողին հնարավորություն է տրվում անհատական ծրագրով կրկնել դասընթացները հաջորդ կիսամյակներում՝ շարունակելով ուսումը:
9. Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո սովորողին թույլատրվում է հանձնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերը, եթե դասընթացի գնահատման արդյունարար միավորը 5 ÷7 տիրույթում է, իսկ 4-ից ցածր արդյունարար միավորի դեպքում սովորողը հեռացվում է մագիստրատուրայից:
10. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
11. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

## 8. Մագիստրոսի ծրագրի ուսումնական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը

1. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբում մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողը ծրագրի ղեկավարից ստանում է ուսումնառության իր անհատական ծրագրի ձևաթերթը, որտեղ նախապես լրացված են ուսումնական և հետազոտական կառուցամասերի բաղկացուցիչ դասընթացները և գիտակրթական մոդուլները՝ բացառությամբ կամընտրական դասընթացների:
2. Անհատական ծրագրում տրվում է դասընթացների ընտրացանկն ըստ ուսման տարիների և կիսամյակների՝ դրանց հատկացված կրեդիտների հետ միասին: Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը բերված է հավելված 1-ում:
3. Ուսման առաջին շաբաթում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի հետ միասին լրացնում է կամընտրական դասընթացները

ուսումնառության իր անհատական ծրագրում, որն այնուհետև հաստատվում է ծրագրի ղեկավարի կողմից և ներկայացվում ամբիոն:

4. Անհատական ծրագրում ներառված տվյալ կիսամյակի կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցումն իրականացվում է համապատաս խան ամբիոնում:
5. Հետագա կիսամյակների ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրի դասընթացների ընտրացանկում՝ նախապես ստանալով ուսումնական խորհրդատուի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը: Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը բերված է *հավելված 2-ում:*
6. Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել:
7. Անհատական ծրագրի փոփոխությունը ենթադրում է դասընթացի բացթողում, նոր դասընթացի ընտրություն (ավելացում) ընտրացանկում, որի իրա կանացման ընթացակարգը հետևյալն է.
    - ուսանողը կարող է բաց թողնել իր ընտրած դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 1-ին շաբաթվա վերջը,
    - մինչև տվյալ կիսամյակի 2-րդ շաբաթվա վերջը բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պետք է ստանա նաև դասընթացը վարող դասախոսի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը,
    - ուսանողն իր ընտրացանկում նոր դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ՝ մինչև պարապմունքների 1-ին շաբաթվա վերջը:
8. Նախորդող կրթական աստիճանի մասնագիտության փոփոխությամբ մագիստրոսական ծրագրում ընդգրկված ուսանողների համար ուսումնառության 1-ին շաբաթվա ընթացքում կարող են նշանակվել լրացական դասընթացներ: Լրացական դասընթացներ նշանակելու հարցը համապատասխան հարցազրույցից հետո առաջադրվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի կողմից և համաձայնեցվում մասնագիտացնող ուսումնական ստորաբաժանման հետ:
9. Ուսանողը պատասխանատու է ուսումնառության իր անհատական ծրագրի ճշտության և ամբողջականության ապահովման համար:
10. Կենտրոնն իրեն իրավունք է վերապահում հանել ցանկացած դասընթացի առաջադրումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ:

## 9. Մագիստրոսի ծրագրի հետազոտական կառուցամասի կազմակերպման ընթացակարգը

1. Կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում մագիստրոսական ծրագրի ղեկավարը կազմում և ուսանողներին է տրամադրում տվյալ կիսամյակի հետազոտական աշխատանքների պլանը (ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսվող գիտակրթական մոդուլների կազմակերպման ժամանակացույցը):
2. Ծրագրի հետազոտական կառուցամասով նախատեսված գիտակրթական մոդուլների կատարողականի ստուգման համար կիրառվում է ատեստավորում: Գիտական ղեկավարի սեմինարի, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքի և պրակտիկաների ատեստավորումը կատարում է մագիստրանտի գիտական ղեկավարը և/կամ ամբիոնի վարիչը, որը լրացված ատեստավորման թերթիկն անձամբ հանձնում է ամբիոն:
3. Ուսումնառության 1-ին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած ուսանողին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը 2-րդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսված անավարտ աշխատանքը: 2-րդ և 3-րդ կիսամյակներում որևէ հետազոտական մոդուլով չատեստավորված ուսանողն ազատվում է մագիստրատուրայից:

## 10. Դասընթացների տեղեկագիրքը

1. Կենտրոնը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է Կենտրոնի դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ կայքէջում տեղադրված է էլեկտրոնային տարբերակով), որը նաև կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց է:
2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է Կենտրոնում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) ընդհանուր տեղեկություն Կենտրոնի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ներբուհական հիմնական կանոնները (հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավո րությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ավարտական ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատ վությունը և այլն,
- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները , ներառյալ՝ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի գիտելիքներով ու կարողություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), անհրաժեշտ նախապայմանները, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները, դասավանդման լեզուն և այլն,

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

- նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի զեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսանողներին հասանելի ուսումնական/լաբորատոր ենթակառուցվածքները և այլն:

## 11. Կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորումը

1. Ուսանողի կողմից մագիստրոսի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական թեզի կատարումով և պաշտպանությամբ:
2. Մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի նշանակումը և թեմայի հաստատումը իրականացվում է 1-ին կիսամյակում՝ 2 տարի ուսման տևողության դեպքում, 2-րդ կիսամյակում՝ 2,5 տարի ուսման տևողության դեպքում: Համապատասխան ընթացակարգը ներառում է.
   - ծրագրի ղեկավարի հետ խորհրդատվությունների անցկացում, որոնց ընթացքում ճշգրտվում են մագիստրանտի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագրի թեզերի ղեկավարների հետ,
   - գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում,
   - մագիստրոսական թեզի համաձայնեցված թեմաների և գիտական ղեկավարների թեկնածությունների ներկայացում

մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակումը:

3. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համաձայնեցված մագիստրոսական թեզի առաջարկի պատրաստում և ներկայացում՝ ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) քննարկման և հաստատման համար, որն իրականացվում է ըստ ժամանակացույցի: Առաջարկվող մագիստրոսական աշխատանքը պետք է պարունակի թեմայի բնագավառում առկա իրադրության նկարագրությունը, աշխատանքի նպատակը, ածանցյալ խնդիրների առաջադրումն ու սահմանումը, դրանց հավանական լուծումները, հետազոտական մեթոդները և գրականության ցանկը: Թեզի աշխատանքի կատարումը շարունակվում է ուսուցման հաջորդող կիսամյակներում:

4. Մագիստրոսական թեզի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 6 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա) մագիստրոսական թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման քննարկմանը պաշտպանությունից առնվազն 4 շաբաթ առաջ: Թեզի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարված աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ) թեզի նախնական քննարկում մասնագիտացնող ամբիոնում (միջամբիոնային հանձնախմբում) մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրանտի գիտական ղեկավարի և մագիստրանտի պարտադիր մասնակցությամբ մեկ շաբաթյա ժամկետում/1-ին շաբաթ/ : էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ քննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից թեզը երաշխավորվում է պաշտպանության,

գ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից աշխատանքի գրախոսության կազմակերպում, որի արդյունքում ոչ ուշ, քան պաշտպանությունից 3 օր առաջ մասնագիտացնող ամբիոնին (միջամբիոնային հանձնախմբին) է ներկայացվում թեզի վերաբերյալ գրախոսականը,

դ) մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված ամփոփիչ ատեստավորման կարգի:
6. Մագիստրոսական թեզի գնահատումը կատարվում է աղյուսակ 4-ում ներկայացված 20 միավորանոց սանդղակով:
7. Մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար 2021 թվականից սահմանվում են գնահատման միավորների հետևյալ չափաքանակները.

*Աղյուսակ 4.*

| Թիվ | Չափանիշ | Առավելագույն միավորը |
|---|---|---|
| *1* | Թեմայի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը | 2 |
| *2* | Հետազոտության իրականացումը և արդյունքները | 6 |
| *3* | Ձևակերպման որակը(շարադրանքը և ձևավորումը) | 4 |
| *4* | Թեզի հրապարակային պաշտպանությունը | 8 |
| | **Ընդամենը** | **20** |

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կողմից մագիստրոսական թեզի գնահատումները կատարվում են սահմանված նմուշի գնահատման ձևաթերթում (տե՛ս *հավելված 4*):

## 12. Կրեդիտների փոխանցումը

1. Այլ բուհերից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն մագիստրոսի կրթական ծրագրեր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների (կիսամյակ, ուստարի)

տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

2. Այլ կրթական ծրագրից ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն կրթական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե դրանց բովանդակությունները միանման են կամ առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

3. Այլ բուհում ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի և ընդունող բուհի միջև:

4. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը նշանակում է ECTS-ի բուհական համակարգող, որի գործունեության հիմնական ոլորտները և պարտականությունների շրջանակները կանոնակարգվում են առանձին կարգով:

## 13. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ամբիոնները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:

6. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է Կենտրոնը՝ ելնելով տարբեր կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների թվի և ամբիոնների դասախոսական ներուժի համադրումից:

7. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:

8. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ

հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար (ամիսը 2 անգամ) կազմակերպում խմբային և/կամ անհատական խորհրդատվություններ, ողջ աշխատանքային օրվա ընթացքում օգնում դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

## 14. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2. Ուսանողն իրավունք ունի՝
- – ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար Կենտրոնի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- – միջբուհական փոխանակման և (կամ) ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- – փոխադրվելու մեկ այլ բուհ , ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի,
- շարունակելու ուսումնառությունը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում՝ համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- մագիստրոսի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալու ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված՝ երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

15. Եզրափակիչ դրույթներ

Սույն կարգը գործողության մեջ է դրվում 2019 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու համար։

# II ԲԱԺԻՆ

## ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## Մաս I.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է հեռակա ուսուցում՝ «Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն» ծրագրով.

## 1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

| Կրթամաս | Կրեդիտներ | Դասընթաց-մոդուլների քանակը |
|---|---|---|
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Լրացական դասընթացներ | 0 | 4 |
| Ընդհանուր կրթամաս | 7 | 2 |
| Մասնագիտական պարտադիր կրթամաս | 37 | 12 |
| Կամընտրական դասընթացներ | 9 | 6 |
| ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ | | |
| Գիտական սեմինար | 12 | 4 |
| Գիտահետազոտական աշխատանք | 12 | 4 |
| Գիտահետազոտական պրակտիկա | 3 | 1 |
| Գիտամանկավարժ. պրակտիկա | 3 | 1 |
| Մագիստրոսական թեզ | 15 | 1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 95 | 35 |

Մագիստրոսի ծրագրի ուսումնական և հետազոտական կառուցամասերի հարաբերակցությունը.

| Կիսամյակ | I | II | III | IV | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնական կառուցամաս, կրեդիտ | 6 | 6 | 6 | 24 | 36 |
| Հետազոտական կառուցամաս, կրեդիտ | 6 | 6 | 6 | 6 | 24 |
| Ընդամենը, կրեդիտ | 23 | 24 | 24 | 24 | 95 |

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 3-ը հատկացվում է տեսական ուսուցմանը, 9-ը՝ ինքնուրույն աշխատանքին և խորհրդատվություններին, իսկ 4-ը՝ քննաշրջանին:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը կազմում է առնվազն 96 կրեդիտ, մեկ կիսամյակում այն կազմում է 24 կրեդիտ, իսկ մեկ ուսումնական տարում՝ առնվազն 48 կրեդիտ:

# 2. Ծրագրի բովանդակությունը

## 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է ***լրացական,, ընդհանուր, մասնագիտական պարտադիր, և կամընտրական*** դասընթացներից: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

### 2.1.1. Լրացական դասընթացներ

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է օտար լեզուն: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 2 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

| Թվանիշ | | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ)[8] | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *18/H01* | *Մասնագիտական օտար լեզու/անգլերեն/* | *0* | *12/0/0* | *I* | *Ստուգարք* |
| *18/H01* | *Մասնագիտական օտար լեզու/անգլերեն/* | *0* | *12/0/0* | *II* | *Ստուգարք* |

### 2.1.2. Ընդհանուր դասընթացներ

Ընդհանուր կրթամասի աշխատածավալը 7 կրեդիտ է: Ընդհանուր դասըն-

[8] Այսուհետ՝ դ – դասախոսություն, գ – գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

թացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումն ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *«Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում»* և *«Մասնագիտության փիլիսոփայության հարցեր»*: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր դասընթացներին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *05/H02* | *Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *16/H01* | *Մասնագիտության փիլիսոփայության հարցեր* | *4* | *12/0/0* | *I* | *Քննություն* |

### 2.1.3. Մասնագիտական պարտադիր դասընթացներ

Մասնագիտական պարտադիր կրթամասը կարող է ընդգրկել 8-ից մինչև 16՝ երեքից վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթաց: Կրթամասի ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանված է 37 կրեդիտ: Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

Մագիստրոսական ծրագիր՝
՝«Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն»

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրեդիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամյակ | Գնահատման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *17/H20* | *Տեղեկատվական հասարակության քաղաքական հիմնախնդիրները* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *17/H24* | *ՀՀ ազգային անվտանգության քաղաքականություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *17/H06* | *Քաղաքական հոգեբանություն և PR* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *17/H25* | *Իրավունքը կառավարման գործընթացում* | *3* | *12/0/0* | *IIII* | *Քննություն* |
| *17/H26* | *Հանրային կապեր* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *17/H27* | *Ժողովրդավարության ինստիտուտը կառավարման գործընթացում* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *17/H35* | *Խոսքի վարպետություն* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *20/H37* | *Արդյունավետ կառավարում* | *4* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *17/H19* | *Քաղաքական դիսկուրս* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *17/H30* | *Քաղաքական լիդերություն, հիմնախնդիրները* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *17/H33* | *ՀՀ կառավարման համակարգը* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *17/H40* | *Քաղաքական հետազոտության մեթոդներ* | *3* | *18/0/0* | *III* | *Քննություն* |

### 2.1.4. Կամընտրական դասընթացներ

Կամընտրական դասընթացներն ընտրվում են Կենտրոնի այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու մագիստրոսական թեզը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանափակված է 9 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար

ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հե-տևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

Մագիստրոսական ծրագիր՝
՝«Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն»

| Թվանիշ | Մոդուլ-դասընթաց | Կրե-դիտ | Լսարանային ժամ (դ/գ/լ) | Կիսամ-յակ | Գնահատ-ման ձևը |
|---|---|---|---|---|---|
| *17/H31* | *Պառլամենտարիզմ* | *3* | *12/0/0* | *I* | *Քննություն* |
| *17/H34* | *Սահմանադրական մշակույթ* | | | *I* | *Քննություն* |
| *06/H19* | *ՀՀ գործարարական իրավունք* | *3* | *12/0/0* | *II* | *Քննություն* |
| *06/H38* | *Վարչարարություն և վարչական վարույթ* | | | *II* | *Քննություն* |
| *17/H17* | *Քաղաքական տեխնոլոգիաներ* | *3* | *12/0/0* | *III* | *Քննություն* |
| *17/H36* | *Մարդու հիմնարար իրավունքներ և ազատություններ* | | | *III* | *Քննություն* |

## 2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ ***գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա*** և ***մագիստրոսական թեզ:***

***Գիտական սեմինարը*** ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի անցկացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ: Կազմակերպվում է ուսումնառության բոլոր 4 կիսամյակներում:

***Գիտահետազոտական աշխատանքի*** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գ-իտական ղեկավարի հետ համատեղ: Այն ևս կազմակերպվում է ուսում-նառության բոլոր կիսամյակներում:

***Գիտահետազոտական պրակտիկան*** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կա-

րող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

***Գիտամանկավարժական պրակտիկան*** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատածավալ:

***Մագիստրոսական թեզի*** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 15 կրեդիտ աշխատածավալ:

# Մաս II.

## ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է «Պատմության և միջազգային հարաբերությունների» ամբիոնում հեռակա ուսուցմամբ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի `«Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն» մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, , ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

## Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

**05/H11. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում (3 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Moodle հեռաուսուցման հարթակում ուսուցանելու ընթացքում ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի ուսանողները ինքնուրույն ձեռք բերեն լրացուցիչ մասնագիտական գիտելիքներ, ձեռք բերած գիտելիքը կարող լինեն գրավոր և բանավոր խոսքով ներկայացնել, բարդությունները հնարավորինս հաղթահարել: Ծրագրի խնդիրներն են՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին գիտելիքներ հաղորդել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մասին, որի հետևանքով ուսանողը կկարողանա ավելի խորը հետազոտությունները կատարել իր ոլորտում:

Դասընթացն ընդգրկում է ինֆորմացիայի տեսակների նկարագրությունները՝ թվային, տեքստային, ձայնային, պատկերներ և տեսաշարեր և այլն: Թվային ինֆորմացիայի ներկայացում տարբեր թվային համակարգերում, մշակում, արտապատկերում ինֆորմացիայի այլ տեսակների միջոցով: **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա**
ԱՀ արտաքին և ներքին կառուցվածքը, ներքին սարքավորումների նպաակը:
Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր:
2. **կհասկանա** Windows 7, 8, 10
ՕՀ հիմնական տարրերը, աշխատանք պատուհանի հետ, ֆայլային համակաչգ, աշխատանք ֆայլերի հետ, անվտանգություն:
Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտական կայքեր: Անվտանգություն: Ամպային տեխնոլոգիաներ:
3. **կկարողանա կատարել** MS Word 2010, MS Excel 2010, MS Power Point 2010
Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խ նդիրների պարզաբանում և շտկում

Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդի րների պարզաբանում և շտկում:

3.1 **MS Office Power Point** ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում, դրվագներում

օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

3.2 **MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝** բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում:

3.3 **MS Office Word տեքստային խմբագրիչում՝** տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում, և ձևավորում:

Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ (մասնավորապես՝ ներմուծել **MS Office Excel** աղյուսակը **MS Office Word** ) MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստեր և ռեֆերատների պատրաստում:

Հոդվածներում, ռեֆերատներում հղումների ստանդարտների հետ աշխատել՝ մասնավորապես, IEEE 2006, ГОСТ(сортировка по именам) ГОСТ(сортировка по названиям) և այլն այլ ստանդարտներով աշխատել ինչպես նաև «***Բովանդակություն***» կազմել օգտագործելով **MS Office Word** հրամաններից**:**

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, ելքի-մուտքի սարքեր: Ինֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները: Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: – վերջնարդյունք՝ Կկարողանա ինքնությունն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: ***Թեմա 2՝*** Համակարգչային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: ՏՀՏ գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր – Կկարողանա ճիշտ և անվտանգ աշխատել համացանցում:: ***Թեմա 3՝*** MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – Կկարողանա պատրաստի մագիստրոասական թեզի համար պատրաստել սհնորհանդես և ներկայացնել այն: ***Թեմա 4՝*** MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և

դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – վերջնարդյունք՝ աշխատել ցուցակների հետ: ***Թեմա 5՝*** Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսյակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – վերջնարդյունք՝ Կկարողանա ինքնութույն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: ***Թեմա 6՝*** MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում; MS Office PowerPoint ծրագրի դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – վերջնարդյունք՝ գրաֆիկական պատկերներով, նկարներով, աղյուսակներով ներկայացնել մագիստրոսական թեզը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գր ավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա , յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

## Լրացական դասընթացներ

**18/H01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն-** 1) (0 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք*
**Նպատակը.**

Երկու կիսամյակ տևող ուսումնական գործունեության ընթացքում «Հանրային Կառավարում» բաժնի ուսանողներին ուսուցանել մասնագիտական անգլերեն՝ հանրային կառավարման համատեքստում, որը ներառում է համապատասխան մասնագիտական եզրույթների և արտահայտությունների, քերականական կառույցների, ժամանակաձևերի ուսումնասիրում և տիրապետում, մեթոդական կողմնորոշիչ ցուցումներ՝ձեռք բերված գիտելիքն ամրապնդելու և վերարտադրելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու

սովորողներին զարգացնել խոսքային հմտություններն ու կարողությունները: Դասընթացը ենթադրում է նաև լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի ուսումնասիրություն, ինքնուրույն աշխատանք:

**Կրթական արդյունքները.**

**Կիմանա**

• մասնագիտական բառապաշար;

• համապատասխան մեթոդիկա՝ մասնագիտական տերմինների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,

**Կկարողանա**

• կարդալ մասնագիտական թեմաներ անգլերեն լեզվով

• պատրաստել պրեզենտացիաներ, զեկուցումներ,

• խոսակցել անգլերենով՝ կիրառելով մասնագիտական տերմինների և արտահայտությունների անհրաժեշտ պաշար,

• կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ

• լսել և հասկանալ անգլերեն լեզվով տեքստեր,

• մասնակցել բանավոր քննարկումների, բանավեճերի

**Կտիրապետի**

• մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին

• քերականական կառույցներին և ժամանակաձևերին,

• խոսակցական անգլերենին

• անգլերենի տեսական և գործնական գիտելիքին,

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ներածություն, **վերջնարդյունք՝** Ուսանողները ծանոթանում են առարկային, դասախոսը ներկայացնում է դասընթացը և տեղեկանում է ուսանողների ունակությունների մասին թեստի և քննարկումների միջոցով, **թեմա 2՝** What is Public Administration, **վերջնարդյունք՝** նոր բառապաշար և խմբային քննարկումներ անգլերենով, օգտագործելով նոր մասնագիտական բառապաշարը, անգլերենի ժամանակաձևերը, Present simple and Present continuous **թեմա 3՝** Forms of government, **վերջնարդյունք՝** Մասնագիտական բառապաշարով կիրականացնեն խմբային քննարկումներ անգլերենով օգտագործելով նոր մասնագիտական բառապաշարը, անգլերենով կտեղեկանան պետական կառավարման ձևերին,կներկայացնեն Հայաստանի պետական կառավարման ձևերը: Կկարողանան անգլերենով wh հարցեր կազմել, ինչպես նաև տիրապետել անգլերենի անցյալ ժամանակներին, **թեմա 4՝** Arguments, **վերջնարդյունք՝** արգումենտների 3 տեսակները կկարողանան վերլուծել տեքստեր արգումենտների վերաբերյալ օգտագործելով նոր մասնագիտական բառապաշարը կվերհիշեն անգլերենի կրավորական սեռը, **թեմա 5՝** Contemporary division of government, **վերջնարդյունք՝** Ուսանողները նոր բառապաշարով կիրականացնեն խմբային քննարկումներ անգլերենով օգտագործելով նոր մասնագիտական բառապաշարը, անգլերենով կներկայացնեն կառավաման 3 մարմինները,

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**
Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:
Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

**18/H01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն- 2)** (0 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, ստուգարք*
**Նպատակը.**
Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել անգլերենի կիրառական օգտագործումը:
Դասընթացի շրջանակներում ուսանողները սովորում են անգլերենի քաղաքական բառապաշարը անգլերեն բնագիր թերթերի ու տեքստերի հիման վրա, որը վերջիններիս մոտ զարգացնում է դասական բնագրերի ընթերցանության և վերլուծության ունակությունները: Դասընթացն անց է կացվում “Politics and international relations” գրքի միջոցով՝ զուգահեռ անգլերեն թերթերի հետ:
**Կրթական արդյունքները.**
**Կիմանա**
• մասնագիտական բառապաշար;
• համապատասխան մեթոդիկա՝ մասնագիտական տերմինների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,
**Կկարողանա**
• կարդալ մասնագիտական թեմաներ անգլերեն լեզվով
• պատրաստել պրեզենտացիաներ, զեկուցումներ,
• խոսակցել անգլերենով՝ կիրառելով մասնագիտական տերմինների և արտահայտությունների անհրաժեշտ պաշար,
• կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ
• լսել և հասկանալ անգլերեն լեզվով տեքստեր,
• մասնակցել բանավոր քննարկումների, բանավեճերի
**Կտիրապետի**
• մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին
• քերականական կառույցներին և ժամանակաձևերին,
• խոսակցական անգլերենին
• անգլերենի տեսական և գործնական գիտելիքին,
**Բովանդակությունը.**
**թեմա 1**՝ City Government, **վերջնարդյունք**՝ կկիրականացնեն բանավեճ անգլերենով օգտագործելով նոր մասնագիտական բառապաշարը: Անգլելենով կպատմեն քաղաքապետարանի և դրա գործառույթների մասին Կսերտեն Present and past perfect ժամանակաձևերը, **թեմա 2**՝ Electoral and Party systems, **վերջնարդյունք**՝ Ուսանողները կներկայացնեն երկրի ընտրական և կուսակցական համակարգըինչպես նաև կծանոթանան այլ երկրների ընտրական և կուսակցական համակարգներին, **թեմա 3**՝ Three Branches of the Government, **վերջնարդյունք**՝ Ուսանողները կտեղեկանան ՄԹ-ի և ԱՄՆ-ի քաղաքական կառավարման համակարգին, **թեմա 4**՝ A Public Administration Career, **վերջարդյունք**՝

Ուսանողները ունակ կլինեն անգլերեն զեկույցով ներկայացնելու Հանրային կառավարում առարկայի առանձնահատկությունները:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:

Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

**18/H02. Մասնագիտական օտար լեզու (գերմաներեն-** 1) (0 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Երկու կիսամյակ տևող ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին ուսուցանել մասնագիտական գերմաներեն, որը ներառում է համապատասխան մասնագիտական եզրույթների և արտահայտությունների, քերականական կառույցների, ժամանակաձևերի ուսումնասիրում և տիրապետում, մեթոդական կողմնորոշիչ ցուցումներ՝ձեռք բերված գիտելիքն ամրապնդելու և վերարտադրելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնել խոսքային հմտություններն ու կարողությունները: Դասընթացը ենթադրում է նաև լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի ուսումնասիրություն, ինքնուրույն աշխատանք:

**Կրթական արդյունքները.**

**1. Կիմանա**

• գերմաներենի ժամանակաձևերը, քերականական կառուցվածքները, մասնագիտական հիմնական բառապաշարը

• գերմաներենի իմացության խորացմանը նպաստող անհրաժեշտ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի արդյունավետ օգտագործման ձևերն ու եղանակները,

• համապատասխան մեթոդներ՝ մասնագիտական եզրույթների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,

• տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ձևերը

**2. Կկարողանա**

• ճիշտ օգտագործել ժամանակաձևերն ու կառույցները

• օգտվել գերմաներեն մասնագիտական գրականությունից, մեթոդական ուղեցույցներից՝ խորացնելու մասնագիտական գիտելիքը,

• արդյունավետ օգտագործել բառարանները,

• պատրաստել ներկայացումներ , զեկուցումներ,

• խոսել գերմաներեն՝ կիրառելով մասնագիտական եզրույթների և արտահայտությունների անհրաժեշտ պաշար,

• լսել և հասկանալ գերմանալեզու տեքստեր,

• մասնակցել բանավոր քննարկումների, բանավեճերի, երկխոսությունների:

**3. Կտիրապետի**

• քերականական կառույցներին և ժամանակաձևերին,

• գերմաներենի տեսական և գործնական գիտելիքին,

• գերմաներեն խոսակցական լեզվին /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված ուսանողների ընդունակություններից/,

• մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին,

գերմաներենից հայերեն և հայերենից գերմաներեն մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի թարգմանական տեխնիկային

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Ներածություն, **վերջնարդյունք՝** Ներկայացնել դասընթացի ծրագիրը և նպատակները, ստուգել ուսանողների գերմաներենի մակարդակը թեսթավորման միջոցով, **թեմա 2՝** Berufe und Familie **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ մասնագիտություն և ընտանիք թեմայով կարողանալ կիրառել երկխոսության մեջ **թեմա 3՝** Wohnen **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ բնակվել թեմայով կիրառել երկխոսության մեջ **թեմա 4՝** Tourismus **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ զբոսաշրջություն թեմայով ներկայացնել սեփական բիզնես գաղափարներ, դիտել հոլովակ և քննարկել այն **թեմա 5՝** Einkaufen **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ գնումներ կատարել թեմայով, կազմել ճաշացուցակ և կատարել պատվերներ, **Թեմա 6՝** Stadtbesichtigung **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ քաղաքի այցելություն թեմայով **թեմա 7՝** Kultur **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ մշակույթ թեմայով, ներկայացնել սիրված մշակութային իրադարձությունները, դիտել հոլովակ և քննարկել այն **թեմա 8՝** Sport und Fitness **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ սպորտ և ֆիթնես թեմայով, կազմել ձեր ֆիթնես պլանը **թեմա 9՝** Gesundheit und Krankheit **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ առողջություն և հիվանդություն թեմայով, կիրառել երկխոսության մեջ **թեմա 10՝** Arbeitsleben **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցոիթյուններ աշխատանքային կյանք թեմայով, նկարագրել ապագա աշխատանքը դիտել հոլովակ և քննարկել այն: **Թեմա 11՝** Im Restaurant **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ ռեստորանում թեմայով, կիրառել երկխոսության մեջ **Թեմա 12՝** Firmenporträt **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ ֆիրմայի ներկայացում թեմայով, կիրառել երկխոսության մեջ **թեմա 13՝** Ernährung **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ սնունդ թեմայով, ներկայացնել ուտելու սովորույթները Հայաստանում և Գերմանիայում, խորհուրդներ տալ առողջ սնունդի վերաբերյալ, դիտել հոլովակ **թեմա 14՝** Post und Telekommunikation **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ պոստ և հեռահաղորդակցություն թեմայով, կիրառել երկխոսության մեջ **թեմա 15՝** Medien **վերջնարդյունք՝** Սովորել բառեր և բառակապակցություններ լրատվամիջոցներ թեմայով, ներկայացնել տարբեր լրատվամիջոցներ, դիտել հոլովակ և քննարկել այն

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Յուրաքանչյուր դասաժամի ավարտին՝ գրավոր և բանավոր կերպով:
Ստուգարքը գնահատվում է բանավոր պատասխանի հիման վրա:

## Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

**17/H06. Քաղաքական հոգեբանություն և քաղաքական PR** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**
ներկայացնելով քաղաքական հոգեբանության տեսական ու կիրառական նվաճումները՝ սովորեցնել հետազոտել և վերլուծել ժամանակակից լիդերների ու քաղաքական գործընթացների հոգեբանական առանձնահատկությունները:

**Կրթական արդյունքները.**

1. **Կիմանան**

- քաղաքականության հոգեբանական հիմնահարցերը,
- քաղաքական օբյեկտների հոգեբանական ուսումնասիրության տեսական ու կիրառական ժամանակակից ուղղությունները,
- քաղաքական խմբերի և լիդերների տիպերի հոգեբանական առանձահատկությունները,
- մանիպուլյատիվ զանգվածային ազդեցության հոգեբանությունը
- քաղաքական PR-ի հոգեբանական կառուցակարգերը:

2. **Կկարողանան**

- վերլուծել ու համադրել քաղաքական գործընթացների հոգեբանական պատճառա-հետևանքային կապերը,
- տարբերակել լիդերության տիպը և նրան բնորոշ հոգեբանական նկարագիրը,
- վերլուծել քաղաքական տեղեկատվության շրջանառման հոգեբանական ներազդեցության եղանակները:

**3. Կտիրապետեն**

- կոնտակտային և դիստանտային մեթոդների կիրառմամբ քաղաքական գործչի անձնային հոգեբանական գծերի բացահայտմանը,
- քաղաքական վերլուծության և կանխատեսման հմտություններին,
- քաղաքական գործչի արդյունավետ PR-ի և իմիջային կերպարի մոդելավորմանը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Քաղաքական հոգեբանությունը որպես գիտություն. մեթոդները, **վերջարդյունք՝** Կիմանան՝ քաղաքական հոգեբաության զարգացման պատմությունը, նատակն ու խնդիրները: Կկարողանան՝ տարբերակել քաղաքական հոգեբանության քաղաքական և հոգեբանական օբյեկտները:

Կտիրապետեն՝ քաղաքական հոգեբա-նության ուսումնասիրության մեթոդների կիրառման հմտություններին: **Թեմա 2՝** Քաղաքական հոգեբանության հիմնական հասկացությունները, **վերջնարդյունքը՝** Կիմանան՝ քաղաքական հոգեբանության հիմնական հասկացությունները: Կկարողանան՝ առանձնացնել քաղաքական վարքի հոգեբանական բաղադրիչները: **Թեմա 3՝** Անձը և քաղաքականությունը: **Վերջնարդյունքը՝** Կիմանան՝ քաղաքական սոցիալականացման և իշխանության հոգեբանության հիմնահարցերը: Կկարողանան՝ Բնութագրել տարբեր մակարդակների լիդերների հեղինակության և իշխանության առանձնահատկությունները Կտիրապետեն՝ լիդերի անձնային հոգեբանական գծերի դրսևորումների վերլուծությանը: **Թեմա 4՝** Լիդերության դասական և ժամանակակից տեսությունները: **վերջնարդյունք՝** Լիդերության դասական և ժամանակակից տեսությունները: **Թեմա 5՝** Լիդերության տիպաբանություններ, **վերջնարդյունքը՝** Կիմանան՝ լիդերության տիպաբանության դասական ու ժամանակակից մոտեցումները Կկարողանան՝ տարբերակել համաշխարհային և հայրենական լիդերների հոգեբանական տիպը: Կտիրապետեն՝ կուսակցաստեղծման և լիդերի ընտրություն հոգեբանական առանձնա-հատկություններին: **Թեմա 6՝** Խմբերը քաղաքականության մեջ: **վերջնարդյունքը՝** Կիմանան՝ քաղաքական տարպեր խբբերի հոգեբանական բնութագիրը Կկարողանան՝ վերլուծել անցումային հասարակության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 7՝** Ազգային և էթնիկ խմբերի հոգեբանություն: **վերջնարդյունք՝** Ազգային և էթնիկ խմբերի հոգեբանություն, վերջնարդյունքը՝ Կիմանան՝ Ազգային և էթնիկ խմբերի հոգեբանական հիմնախնդիրները: Կկարողանան՝ գնահատել ազգային և էթնիկ խմբերի նշանակությունը ժամանակակից աշխարհում: **Թեմա 8՝** Զանգվածները քաղաքականության մեջ, **վերջնարդյունք՝** Կիմանան՝ զանգվածային հոգեբանության հիմնահարցերը: Կտիրապետեն՝ հոգեբանական պատերազմներից պաշտպանելու հմտություններին: **Թեմա 9՝** Քաղաքական PR -ի հոգեբանություն, **վերջնարդյունքը՝** Կիմանան՝ PR ոլորտի հիմնական մասնագիտությունների բնութագրիչներն ու գործառույթները: Կկարողանան՝ տարբերակել սև PR-ի և հակազովազդի ներգործության հոգեբանական կառուցակարգերը Կտիրապետեն՝սև PR-ից զրագետ պաշտպանվելու տեխնոլոգիաներին: **Թեմա 10՝ Զանգվածային հաղորդակցության տեսակներ: վերջնարդյունք՝** Կիմանան՝ պաշտոնական և ոչ պաշտոնական հաղորդակցության տեսակները Կկարողանան՝ տարբերակել ասեկոսեների և բամբասանքների հոգեբանական ներգործության դրսևորումները քաղաքական գործընթացներում Կտիրապետեն՝ զանգվածային հաղորդակցության շրջանառման կառուցակարգերին **Թեմա 11՝** Լսարանի վրա ազդեցության սոցիալ-հոգեբանական մեթոդները: **վերջնարդյունք՝** Կիմանան՝ համոզման և ներշնչման մեթոդով լսարանի վրա ազդեցության եղանակները Կկարողանան՝ բացահայտել սուտն ու մանիպուլյացիան քաղաքական գործընթացներում: Կտիրապետեն՝ կարգախոսների ստեղծման նյարդալեզվաբանական ծրագրավորման հնարներին **Թեմա 12՝**Քաղաքական իմիջի հոգեբանություն, **վերջնարդյունք՝** Կիմանան՝ քաղաքական գործչի և երկրի իմիջի կառուցվածքային բովանդակությունը Կկարողանան՝ իրականացնել լիդերի իմիջի բաղադրիչների վերլուծություն Կտիրապետեն՝ անձնական հմայքի կառուցման և անվտանգ հաղորդակցության կանոնների տեխնոլոգիաներին:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում գրավոր, մյուսը՝ բանավոր պատասխանի ձևով: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է, որը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը համապատասխանաբար գնահատվում է առավելագույնը 4, 3 և 3 միավոր: Գնահատման քայլը 0,5 միավոր է:

**17/H19.** ***Քաղաքական դիսկուրս*** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

ուսումնասիրել քաղաքական դիսկուրսի տեսական-մեթոդաբանական հիմքերը, ներկայացնել այս գիտակարգի զարգացումը և ցույց տալ վերջինիս նշանակությունը արդի քաղաքական գործընթացներում: Ծրագրի նպատակն է նաև մագիստրանտների մոտ ձևավորել քաղաքական դիսկուրսի վերլուծության համար անհրաժեշտ մասնագիտական հմտություններ և որակներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. Կիմանան**

• քաղաքական խոսույթի դերը և նշանակությունը քաղաքական գործընթացներում

• քաղաքական հաղորդակցության կարևորությունը քաղաքական իշխանության ձևավորման գործում

• փաստարկում

• նախընտրական քարոզարշավների ընթացքում քաղաքական խոսույթի վերլուծության անհրաժեշտությունը

• քաղաքական խոսույթի վերլուծության քաղաքագիտական մեթոդաբանությունը

• քաղաքական խոսույթի տիպաբանությունը

• քաղաքական խոսույթի գործառույթները

**2. Կկարողանան**

. արդյունավետ օգտագործել դասընթացից ստացած տեսական գիտելիքները մասնագիտական վերլուծություններ և եզրակացություններ կատարելիս

. վեր հանել քաղաքական ուժերի խոսույթում առկա իրական բովանդակությունը և դրա առանձնահատկությունները

. քաղաքական խոսույթի վերլուծության արդյունքում կատարել հստակ քաղաքագիտական եզրակացություններ և հավանական քաղաքագիտական կանխատեսումներ

**3. Կտիրապետեն**

.մասնագիտական գրականությունը ինքնուրույն մշակելու, ներկայացնելու հմտություններին

. վերլուծական, քննադատական և համադրական կարողություններ և հմտություններ

. էմպիրիկ նյութը դասակարգելու և օբյեկտիվ գիտական վերլուծության ենթարկելու ունակություն

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: ***Թեմա 2՝*** Քաղաքական խոսույթի տեսությունը: Քաղաքական խոսույթի տեսական և մեթոդաբանական հիմքերը – **վերջնարդյունք՝** Պետք է իմանա քաղաքական հիմնական տեսությունները և մեթոդաբանական հիմքերը:***Թեմա 3՝*** Քաղաքական խոսույթի տիպաբանությունը և դրսևորման ձևերը: Քաղաքական խոսույթի տիպաբանությունը և դրսևորման ձևերը՝ ամբողջատիրության, ավտորիտարիզմի, ժողովրդավարության խոսույթ, գրավոր և բանավոր խոսույթ – **վերջնարդյունք՝** Պետք է կարողանա տարբերել քաղաքական խոսույթի տիպերը՝ ըստ վարչակարգերի և դրսևորման ձևերի: ***Թեմա 4՝*** Քաղաքական խոսույթը որպես քաղաքական մշակույթի տարր: Քաղաքական մշակույթի հասկացությունը, տիպերը, քաղաքական խոսույթը որպես քաղաքական մշակույթի գնահատման միջոց – **վերջնարդյունք՝** Պետք է կարողանա գնահատել քաղաքական մշակույթի խոսույթի վերլուծության միջոցով:***Թեմա 5՝*** Քաղաքական հաղորդակցության հասկացությունը, Քաղաքական հաղորդակցության տեսական հիմնախնդիրները՝ ֆրանկֆուրտյան դպրոց, ֆրանսիական դպրոց **վերջնարդյունք՝** Պետք է կարողանա տարբերել քաղաքական հաղորդակցության դպրոցները և իմանա դրանց առանձնահատկությունները: ***Թեմա 6՝*** Կոնֆլիկտային քաղաքական խոսույթ: Համաձայնության քաղաքական խոսույթ: Կոնֆլիկտային քաղաքական խոսույթ տարրերը և դրսևորման ձևերը, Համաձայնության քաղաքական խոսույթի տարրերը և դրսևորման ձևերը - **վերջնարդյունք՝** Պետք է կարողանա առանձնացնել խոսույթի կոնֆլիկտային և համաձայնության դրսևորումները՝ ըստ անհրաժեշտ տարրերի: ***Թեմա 7՝*** Քաղաքական գործընթացների հետազոտության կոնֆլիկտ-խոսութային մեթոդը: Քաղաքական խոսույթի հետազոտության հիմնական մեթոդները, կոնֆլիկտ-խոսութային մեթոդի առանձնահատկությունը - **վերջնարդյունք՝** Պետք է կարողանա կիրառել խոսույթի վերլուծության մեթոդները կիրառական հետազոտություններում: ***Թեմա 8՝*** Քաղաքական մասնակցության ձևերը քաղաքական խոսույթի համատեքստում: Քաղաքական մասնակցության տիպաբանություն՝ կոնվենցիոնալ և ոչ կոնվենցիոնալ, քաղաքական խոսույթի ազդեցությունը քաղաքական մասնակցության վրա - **վերջնարդյունք՝** Պետք է կարողանա վերլուծել քաղաքական մասնակցությունը քաղաքական խոսույթի վերլուծության միջոցով:***Թեմա 9՝*** Ամբողջատիրության խոսույթ:Ավտորիտարիզմի խոսույթ: Ամբողջատիրության խոսույթի առանձնահատկությունները, ավտորիտարիզմի խոսույթի առանձնահատկությունները - **վերջնարդյունք՝** Պետք է տարբերի խոսույթի առանձնահատուկ դրսևորումները տարբեր քաղաքական վարչակարգերում: ***Թեմա 10՝*** Ժողովրդավարության խոսույթ: Ժողովրդավարության խոսույթի առանձնահատկությունները - **վերջնարդյունք՝** Պետք է իմանա ժողովրդավարության խոսույթին բնորոշ տարրերը: ***Թեմա 11՝*** ՀՀ

առաջատար քաղաքական ուժերի ծրագրերի խոսութային վերլուծություն: ՀՀ առաջատար քաղաքական ուժերի ծրագրերի խոսութային վերլուծություն՝ ՀՀԿ, ԲՀԿ, ԺԿ, ՕԵԿ, ՀՅԴ. ՀԱԿ ծրագրային դրույթների խոսութային վերլուծություն- **վերջնարդյունք**՝ Պետք է կարողանա հետազոտել և վերլուծել կուսակցական ծրագրերը: ***Թեմա 12***՝ Իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի առանձնահատկությունները ՀՀ-ում: Իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի առանձնահատկությունները ՀՀ-ում երեք նախագահների կառավարման տարիներին: Դրանց միջև առկա տարբերությունները և առանձնահատկությունները - **վերջնարդյունք**՝ Պետք է կարողանա համադրել և համեմատել իշխանության և ընդդիմության խոսույթները: ***Թեմա 13***՝ ՀՀ նախագահների քաղաքական խոսույթների համեմատական վերլուծություն: ՀՀ նախագահների քաղաքական խոսույթների համեմատական վերլուծություն՝ ներառելով կառավարման տարիները և նախընտրական գործընթացները- **վերջնարդյունք**՝ Պետք է կարողանա համեմատական վերլուծության ենթարկել նախագահների խոսույթները ՀՀ-ում: ***Թեմա 14***՝ Քաղաքական խոսույթը որպես ժողովրդավարության գնահատման մեխանիզմ: Քաղաքական խոսույթի դերը և նշանակությունը արդի ժողովրդավարացման գործընթացները գնահատելու գործում **վերջնարդյունք**՝ Պետք է տիրապետի ժողովրդավարացման գնահատման գործում խոսույթի դերի և նշանակության ընկալման մեխանիզմներին:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**17/H20. Տեղեկատվական հասարակության հիմնախնդիրները** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

ուսումնասիրել մարդկության քաղաքակրթական զարգացման ներկայիս փուլը կամ ալիքը, այն է՝ տեղեկատվական հասարակությունը: Առաջարկվող թամայի ծրագրային նպատակների շրջանակներում կարևոր ենք համարում ուսումնասիրել տեղեկատվական հասարակության հատկապես քաղաքական հիմնախնդիրները, որոնց շարքում առավելապես կառանձնացնենք հետևյալ հարցերը՝ «էլեկտրոնային ժողովրդավարությունը», «էլեկտրոնային կառավարությունը և էլեկտրոնային կառավարումը», «ինտերնետը և հասարակական կյանքի ժողովրդավարացման հիմնախնդիրները», «ինտերնետը և պետական վերահսկողության հիմնախնդիրները», «տեղեկատվական անվտանգությունը և տեղեկատվական պատերազմները»:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. Կիմանա**

- տեղեկատվական հասարակության հարացույցի վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական տեսությունները,

- տեղեկատվական հասարակությունում քաղաքականության և իշխանության կառուցվածքում տեղի ունեցող կերպափոխումները,

- տեղեկատվական հասարակությանը բնորոշ ժամանակակից այնպիսի հասկացությունների բովանդակությունը, ինչպիսիք են՝ էլեկտրոնային ժողովրդավարությունը, էլեկտրոնային կառավարումը և էլեկտրոնային կառավարությունը,

- տեղեկատվական պատերազմների և տեղեկատվական անվտանգության վերաբերյալ ժամանակակից քաղաքական գիտությունում հայտնի տեսական և գործնական հարցերը,

- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ իրականացվող տեղեկատվական պատերազմների տեխնոլոգիաներին արդյունավետ հակազդելու տեխնոլոգիաները:

**2. Կկարողանան**

- ուսումնասիրել տեղեկատվական հասարակության ձևավորմանը նպաստող ժամանակակից միտումները,

- ստացված տեսական գիտելիքների հիման վրա վերլուծել տեղեկատավական հասարակությունում քաղաքական և իշխանական հարաբերություններում տեղի ունեցող փոխակերպումները,

- կանխատեսել ՀՀ-ում տեղեկատվական հասարակության ձևավորման հեռանկարները,

- հստակորեն կանխորոշել ՀՀ և ԼՂՄ դեմ իրականացվող տեղեկատվական սպառնալիքները և այլն:

**3. Կտիրապետեն**

- տեղեկատվական հասարակության հասկացության էությանը,

- «էլեկտրոնային ժողովրդավարություն» հասկացության բովանդակությանը,

- կտարբերեն «էլեկտրոնային կառավարում» և «էլեկտրոնային կառավարություն» հասկցությունները,

- Հհ և ԼՂՀ դեմ իրականացվող տեղեկատվական պատերազմների բացահայտման տեխնալոգիաներին:

**Բովանդակությունը.**

***ԹԵՄԱ 1.*** Տեղեկատվական հասարակության ընդհանուր բնութագիրը: ***վերջնարդյունքը*** ՝ Այս թեմայի շրջանակներում ներկայացվելու են տեղեկատվական հասարակության ընդհանուր նկարագիրը, տեղեկատվական հասարակության հայեցակարգի տեսական իմաստավորման ժամանակագրական և էմպիրիկ տվյալները և այլն: ***ԹԵՄԱ 2.*** Տեղեկատվական հասարակության տեսական-մեթոդաբանական հիմքերը: **Վերջարդյունք**՝ Այս թեմայի համատեքստում ուսումնասիրվելու են տեղեկատվական հասարակության հիմնական տեսությունները, տեղեկատվական հասարակության հարացույցի դասականների աշխատանքները, որոնցից կառանձնացնենք հատկապես Դ. Բելին, Մ. Կաստելսին, Է. Թոֆլերին, Ի. Մասուդային և այլն: ***ԹԵՄԱ 3.*** Անցումը արդյունաբերական հասարակությունից տեղեկատվական հասարակության: **Վերջնարդյունք**՝ Առաջադրված հարցի շրջանակներում տեղեղկատվական հասարակության հարացույցի համատեքստում հետազոտվելու են մարդկության քաղաքակրթական

զարգացման երեք պատմաքաղաքակրթական փուլերը՝ ագրարային-արդյունաբերական-տեղեկատվական: Հատկապես ոշադրությունը կենտրոնացվելու է վերջին՝ արդյունաբերականից տեղեկատվականի անցման գործընթացի վրա, ինչը հնարավորություն կտա նաև գործնականում հասկանալու և իմաստավորելու տեղեատվական հասարակության անցման անշեղ գործընթացը: ***ԹԵՄԱ 4.*** Սոցիալ-տնտեսական փոխակերպումները տեղեկատվական հասարակությունում: **Վերջարդյունք**՝ Այս թեմայի շրջանակներում կներկայացվեն տեղեկատվական հասարակությյում տեղի ունեցող այն սոցիալ-տնտեսական փոփոխությունները, որոնք տեղեկատվական հասարակությունում վերաևում են ողջ հասարակության հյուսվածքը, այսինքն՝ հասարակության սոցիալական կառուցվածքը, որոնք էլ ապահովում են անցումը արդյունաբերականից տեղեկատվական հասարակություն: ***ԹԵՄԱ 5***. Իշխանությունը և քաղաքականությունը տեղեկատվական հասարակությունում: ***Վերջնարդյունք***՝ Առաջադրված խնդրի դիանկյունից, որի վրա է առավելապես հիմնվում ներկայացված հատուկ կուրսը, ներկայացվելու են տեղեկատվական հասարակությունում տեղի ունեցող քաղաքական փոխակերպումները: Այս համառտեքստում ուսումնասիրվելու են հատկապես քաղաքական ինստիտուտների կերպափախման գործընթացը, քաղաքական ինստիտուտների գործառնության գործընթացում տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմամբ քաղաքական հաղորդակցության նոր ձևերի, դրանց հիմքի վրա հասարակություն-պետություն նոր հաղորդակցական դիսկուրիս առքաջացման մասին: ***ԹԵՄԱ 6.*** Ինտերնետը, ցանցային հանրույթները և քաղաքականությունը տեղեկատվական հասարակությունում: ***Վերջնարդյունք***՝ Այս թեմայի շրջանակներում կաուսումնասիրվեն տեղեկատվական հասարակությունում ինտերնետ տեխնոլոգիաների միջոցով և դրանց ազդեցությամբ քաղաքականության իրականացման որակապես նոր ձևերի մասին: Ժամանակակից տեղեկատվական հասարակությունում ինտերնետ տեխնոլոգիաների միջոցով իրականացվող քաղաքականությունն արդեն առանձնացնում են որպես առանձին տարակարգ՝ ցանցային քաղաքականություն: ***ԹԵՄԱ 7.*** Ինտերնետը և հասարակական կյանքի ժողովրդավարացման հիմնախնդիրները տեղեկատվական հասարակությունում: ***Վերջնարդյունք***՝ Այս հիմնախնդրի շրջանակներում ներկայացվելու են տեղեկատվական հասարակությունում ժողովրդավավարացման հիմնախնդիրները, խոսվել ու է ընտրությունների անցկացման էլեկտրոնային եղանակների մասին, ինչը ՀՀում կարևորագույն քաղաքական խնդիրներից է՝ կապված հատկապես հետընտրական հասարակական-քաղաքական պերմանենտ լարվածությունների հետ: ***ԹԵՄԱ 8.*** «Էլեկտրոնային ժողովրդավարության» հիմնախնդիրները: ***Վերջնարդյունք***՝ Տեղեկատվական հասարակությունում ինտերների միջոցով իրականացվող քաղաքականությունը հաճախ անվանում են էլեկտրոնային ժողովրդավարություն կամ ցանցային քաղաքականություն: Այս թեմայի շրջանակներում ներկայացվելու է տեղեկատվական հասարակության հարացույցի շրջանակներում էլեկտրոնային ժողովրդավարության հիմնախնդրի մասին, ինչը հայ հասարակական-քաղաքական հետազոտություններում քիչ ուսումնասրված հիմնախնդիրներից է: ***ԹԵՄԱ 9.*** Ինտերնետը և պետական վերահսկողությունը: ***Վերջնարդյունք***՝ Տեղեկատվական հասարակությունում տեղեկատվական տեխնոլոգիաների

զարգացումը հասել է զարգացման և անհատի, հասարակության և պետության վրա ազդեցության այնպիսի մակարդակի, որ ժամանակակից հասարակական և քաղաքական գիտություններում խոսում են ինտերնետի՝ պետական վերահսկողության մասին: Կան տարածված տարբեր տեսակետներ պետական վերահսկողության վերաբերյալ, որոնք էլ կլինեն այս թեմայի շրջանակներում հիմնական ուսումնասիրության օբյեկտները: ***ԹԵՄԱ 10.*** Տեղեկատվական պատերազմների հիմնախնդիրները ՀՀ-ում: ***Վերջնարդյունք՝*** Տեղեկատվական հասարակությունում տեղեկատվական-տեխնոլոգիական հեղափոխությունը իր հետ բերեց ոչ միայն նոր հնարավորություններ, այլ նաև սկզբունքորեն նոր տեղեկատվական սպառնալիքներ, որոնք մարդկության պատմության մեջ երբևէ գոյություն չեն ունեցել: Առանձնացում են տեղեկատվական պատերազմների երկու ձև՝ տեղեկատվական-տեխնոլոգիական և տեղեկատվական-հոգեբանական: Այս և նմանատիպ հարցերը լինելու են այս թեմայի հետազոտության շրջանակներում: ***ԹԵՄԱ 11.*** Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում: ***Վերջնարդյունք՝*** Անկախացումից հետո ՀՀ-ն և ԼՂՆ-ն ներքաշվեցին տարատեսակ տեղեկատվական պատերազմների մեջ, որոնք ստիպեցին նորովի իմաստավորել ազգային անվտանգության բաղադրիչ կազմող տեղեկատվական անվտանգության հիմնահարցը: 2009թ. մշակվեց տեղեկատվական անվտանգության հայեցակարգը, որը պետք է համապատասխան կերպով արձագանքեր հատկապես Ադրբեջանական Հանրապետության և Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ իրականացվող տեղեկատվական սպառալիքներին: Արդյոք այս խնդիրը տեղեկատվական անվտանգության հայեցակարգի շրջանակներում լուծվում է, թե՞ ոչ՝ կուսումնասիրենք այս թեմայի շրջանակներում:

***ԹԵՄԱ 12.*** Տեղեկատվական հասարակության ձևավորման հիմնախնդիրները ՀՀ-ում: ***Վերջարդյունք՝*** Հայաստանում տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացը բնակչության կյանքի որակի բարձրացման օպտիմալ և ամենառացիոնալ ուղիներից մեկն է: Եթե երկիրը չունի հարուստ բնական պաշարներ, ապա տեղեկատվական հասարակության շնորհիվ ձեռք է բերում տնտեսությունը գիտատար և ռեսուրսախնայող արտադրությամբ փոխարինելու աննախադեպ հնարավորություն: Առաջանում են սկզբունքորեն նոր հեռանկարներ հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ տնտեսության, գիտության, մշակույթի, կրթության: Պետական կառավարման ամբողջ համակարգը ենթարկվում է գլոբալ փախակերպման: Սական պետք է նշել, որ տեղեկատվական հասարակության անցման գործընթացն աշխարհի զարգացած երկրներում տեղի է ունենում մշակված պետական տեղեկատվական քաղաքականության միջոցով, ինչը ՀՀ-ում բացակայում է: Այս թեմայի շրջանակներում մենք կուսումնասիրենք հենց այս հիմնախնդիրը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**17/H24. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականություն** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

ուսումնասիրել պետության և հասարակության զարգացման պատմական ուղիում անվտանգության ինստիտուտի ձևավորված քաղաքագիտական գնահատականները, անվտանգության համակարգի և դրա մեջ մտնող հիմնական տարրերի բնորոշումները, ուսումնասիրման եղանակներն ու քաղաքականության մշակման հիմնական մոտեցումները, ներկայացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգի քաղաքական-իրավական հիմքերը և կառուցվածքը, ապահովման ներպետական համակարգը՝ մանրամասնելով Նախագահի, Ազգային անվտանգության խորհրդի, գործադիր ու դատական իշխանության թևերի դերակատարությունները, նաև վերահսկողությունը քաղաքական ուժերի և ոչ քաղաքական կառույցների կողմից, համեմատականներ անցկացնել ԱՄՆ-ի, հետխորհրդային ու եվրոպական որոշ պետությունների անվտանգությունը համակարգող մարմինների քաղաքական-իրավական կարգավիճակների վերաբերյալ, վերլուծել Հայաստանի ազգային անվտանգության ապահովման արտաքին երկկողմ ու բազմակողմ ձևաչափը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. Կիմանա**

- անվտանգության ինստիտուտի ուսումնասիրման համակարգային ուղենիշը, սոցիալ-մշակութային և վարքաբանական (բիխեվիորիստական) մոտեցումները, անվտանգության քաղաքականության հետազոտման դիալեկտիկական փոխպայմանավորվածության, պատմականության և սոցիալ-բնապահպանական ամբողջականության սկզբունքները,
- անվտանգության հասկացության, անձի, հասարակության և պետության անվտանգության հիմնական բնորոշումները, զգային շահերը և դրանց ուղղված սպառնալիքները, անվտանգության ոլորտային բաժանումների համառոտ նկարագիրը,
- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգի բնորոշումը և հայեցակարգային հիմնադրույթները, ազգային անվտանգության համակարգի ներքինի ու արտաքինի տարանջատումը,
- Հայաստանի ազգային անվտանգության ապահովման քաղաքական և կազմակերպաիրավական կազմը, ազգային անվտանգության ռազմավարությունը, ռազմական դոկտրինը և տեղեկատվական անվտանգության հայեցակարգը, Նախագահի քաղաքական-իրավական կարգավիճակը անվտանգության ապահովման համակարգում, ազգային անվտանգության խորհրդի կառուցվածքը և գործունեությունը երկրի անվտանգության քաղաքականության համակարգման հարցերում,

- օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործառույթները անվտանգության ապահովման վերաբերյալ, ազգային անվտանգության ապահովման ոլորտում ոչ պետական հաստատությունների ներգրավվածությունը, զինված ուժերի դերը ազգային անվտանգության կայացման ու ապահովման ներպետական կառուցակարգերում,

- տարածաշրջանային անվտանգության կառույցների ստեղծման և զարգացման պատմությունը, տարածաշրջանին առնչվող անվտանգության հիմնական կառույցները և դրանց գործունեության բնութագիրն ու գործառույթները,

- Հայաստանի ազգային անվտանգության ապահովման բազմակողմ ձևաչափի աձանձնահատկությունները, տարածաշրջանային կառույցների գործունեության էությունը և առանձնաահատկությունները, ԵԱՀԿ-ի, ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի փոխգործակցության շրջանակները:

**2. Կկարողանան**

- ուսումնասիրել անվտանգության ինստիտուտի հետազոտական մեթոդաբանությունը և զարգացման օրինաչափությունները, ինքնուրույն գնահատել անձի, հասարակության և պետության անվտանգության առանձնացումը,

- ստացված տեսական գիտելիքների հիման վրա վերլուծել ազգային շահերի համախումբը և դրանց ուղղված ռազմավարական սպառնալիքները, տարանջատել անվտանգության ոլորտային բաժանումները՝ ըստ տարբեր տեսությունների ու մոտեցումների,

- հասկանալ ազգային անվտանգության էությունը և նրա կարևորությունը հայ հասարակության և հայկական պետականության գոյատևման համար, պատկերացնել և տարբերակել Հայաստանի ազգային անվտանգության կառուցվածքային տարրերը և ազգային անվտանգության ապահովման գործում տարբեր մարմինների ու ինստիտուտների դերակատարությունը,

- հստակորեն ընկալել տարածաշրջանային անվտանգության կառույցների զարգացման ընթացքը, իր համար ճշտել և ճանաչել տարածաշրջանային անվտանգության կառույցների դերն ու գործունեության նշանակությունը,

- ունակ լինել վերլուծելու տարածաշրջանային և միջազգային քաղաքականության մեջ տեղի ունեցող գործընթացները և 21-րդ դարում ընթացող աշխարհաքաղաքական տեղաշարժերը, իր գիտելիքները ներդնել ՀՀ անվտանգության ապահովման, ազգային շահերին հետամուտ լինելու և անվտանգային խնդիրների իրականացման գործում:

**3. Կտիրապետեն**

- պետության և հասարակության զարգացման պատմական ուղիում անվտանգության ինստիտուտի ձևավորված տարբեր գնահատականներին, անվտանգության համակարգի և դրա մեջ մտնող հիմնական տարրերի բնորոշումներին, ուսումնասիրման եղանակներինն ու քաղաքականության մշակման հիմնական մոտեցումներին,

- Հայաստանի ազգային անվտանգության էությունը, տեսակները (քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, տեղեկատվական, հոգևոր, բնապահպանական և այլն),

- Հայաստանի արդի հնարավորություններին եվրոպական անվտանգության կառույցների հետ փոխգործակցության հեռանկարում, Եվրոպական

անվտանգության կառույցների դերակատարությանը Հարավկովկասյան տարածաշրջանում,

- Հայաստանի անդամակցությանը Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությանը, գործակցության հնարավոր զարգացումներին, ՆԱՏO-ի կառուցվածքին ու գործունեությանը, վերջինիս հետ Հայաստանի համագործակցության նշանակությանը անվտանգության ապահովման գործում, ՀՀ - ԵԱՀԿ գործակցության սկզբնավորմանը, կապերի ապահովման արդի կառուցակարգերը:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անվտանգության ինստիտուտի հետազոտման հիմնական մոտեցումները և սկզբունքային ուղղությունները, Արդի պայմաններում անվտանգության ինստիտուտի ուսումնասիրման համակարգային, սոցիալ-մշակութային և վարքաբանական (բիխեվիորիստական) մեթոդներ: Ուսումնասիրության հիմնարար դիալեկտիկական փոխպայմանավորվածության, պատմականության, սոցիալ-բնապահպանական ամբողջականության սկզբունքները, հոմեոստազի և համադրման սկզբունքային հետազոտական ուղղություններ – **վերջնարդյունք՝** Իմանալ անվտանգության ինստիտուտի հետազոտման մոտեցումներին վերաբերող մասնագիտական գնահատականները, Կարողանալ տարբերակել այդ հիմնական մոտեցումներն ու դրանց կիրառման հնարավորությունները: ***Թեմա 2՝*** Կոպենհագենյան դպրոցի «սեկյուրիտիզացիայի» տեսությունը ժամանակակից անվտանգության քաղաքական համակարգում, Կոպենհագենյան դպրոցի հիմնադրումը: Անվտանգայնացման առաջարկվող տեսությունը: Դպրոցի կողմից առաջարկվող անվտանգության արժեքային բաժանումը: Ռեֆերենտային օբյեկտ և հարցերի երկփուլ անվտանգայնացում – **վերջնարդյունք՝** Ծանոթանալ Կոպնհագենյան դպրոցի կողմից անվտանգության գնահատման մոտեցումներին,
Տիրապետել այդ դպրոցի կողմից առաջ քաշվող և ՀՀ անվտագության համակարգի արժեհամակարգային նմանության հարցերին: ***Թեմա 3՝*** Անվտանգության համակարգի և դրա մեջ մտնող հիմնական տարրերի բնորոշումները, Անվտանգության հասկացության բնորոշման հիմնական մոտեցումներ: Անձի, հասարակության և պետության անվտանգություն: Ազգային շահերը և դրանց ուղղված սպառնալիքները – **վերջնարդյունք՝** Իմանալ անվտանգության համակարգի բաղադրատարրերի բնորոշումները, Տիրապետել անվտանգության եռամակարդակ սուբյեկտային առանձնահատկությունները, ազգային շահի դերը այդ համակարգում:: ***Թեմա 4՝*** Միջազգային անվտանգության երաշխավորման կենտրոնացված ուղղությունները, Ռուսաստանը միջազգային անվտանգության երաշխավորման գործում: ԱՄՆ անվտանգային քաղաքականությունը աշխար-հում: Անվտանգության բնագավառում եվրոպական ուղղու-թյան բնութագիրը, ասիական (խաղաղօվկիանոսյան) կենտրոնները: Անվտանգությունը իսլամական աշխարհում – **վերջնարդյունք՝** Ծանոթանալ միջազգային անվտանգության երաշխավորման սցենարային զարգացումներին,Կարողանալ գնահատել միջազգային անվտանգության ապահովման գործում ներգրավված ուղղություններն ու դերակատարների մոտեցումները: ***Թեմա 5՝*** Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքական-իրավական համակարգը և կառուցվածքը, ՀՀ ազգային անվտանգության համակարգի

բնորոշումը և հայեցակարգային հիմնադրույթները: Ազգային անվտան¬գու¬թյան համակարգի ներքինի ու արտաքինի տարանջատումը, ապահովման քաղաքական և կազմակերպաիրավական կազմը: Ազգային անվտանգության ռազմավարությունը, ռազմական դոկտրինը և տեղեկատվական անվտանգության հայեցակարգը – **վերջնարդյունք**՝ Իմանալ ՀՀ անվտանգության համակարգի առանձնահատկությունները, քաղաքականության տարբերակումը կառավարման կիսանախագահական ու խորհրդարանական մոդելներում,Տիրապետել անվտանգության ներքին ու արտաքին քաղաքականության, դրանց ապահովման հայեցակարգային հիմունքներին:: ***Թեմա 6***՝ Նախագահը որպես ազգային անվտանգության ապահովման երաշխավոր, ՀՀ Նախագահի քաղաքական-իրավական կարգավիճակը անվտանգության ապահովման համակարգում: Նախագահի իրավասությունը ազգային անվտանգության երաշխավորման հարցերում – **վերջնարդյունք**՝ Ծանոթանալ ՀՀ Նախագահի կարգավիճակին և անվտանգության երաշխավորման մասնակցության շրջանակներին,Կարողանալ տարբերակել Նախագահի դերը անվտանգային ոլորտի կառավարման, ներքին ու արտաքին ուղղություններով ներգրավվածության ծավալները:: ***Թեմա 7***՝ Ազգային անվտանգության խորհուրդը երկրի անվտանգության քաղաքականության համակարգման դերում, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի կառուցվածքը և գործունեությունը: Ազգային անվտանգության խորհրդի դերակատարությունը երկրի անվտանգության քաղաքականության համակարգման հարցերում – **վերջնարդյուն**՝ Տեսագործնական գիտելիքներ ձևավորել Անվտանգության խորհրդի իրավաքաղաքական կարգավիճակի վերաբերյալ, Տիրապետել կառավարման մոդելներում Անվտանգության խորհրդի դերակատարության հարցերին: ***Թեմա 8***՝ Պետական և հասարակական կառույցների ներգրավվածությունը անվտանգության ապահովման գործընթացում, Գործադիր և դատական իշխանությունների գործառույթները անվտանգության ապահովման վերաբերյալ: Ազգային ժողովը և քաղաքական այլ կառույցները անվտանգության ապահով¬ման վերահսկողության համակարգում: Ազգային անվտանգության ապահովման ոլորտում ոչ պետական հաստատությունների ներգրավվածությունը – **վերջնարդյունք**՝ Ծանոթանալ անվտանգության ապահովմանը ներգրավված պետաիշխանական և հասարակական-քաղաքական կառույցների գործունեությանը,

Կարողանալ գնահատել այդ համակարգի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կառուցակարգերը: ***Թեմա 9***՝ Բանակաշինության առաջնահերթությունը Հայաստանի ազգային անվտանգության արժեհամակարգում, ՀՀ զինված ուժերի կազմավորման ուղին և առանձնահատկությունները: Զինված ուժերը որպես ազգային անվտանգության երաշխավոր: ՀՀ ռազմական քաղաքականության հիմնական ուղենիշը – **վերջնարդյունք**՝ Իմանալ պաշտպանական-անվտանգային ոլորտի դերի ընդգծման անհրաժեշտությունը,Տիրապետել զինված ուժերի կայացմանն ու անվտանգության երաշխավորի կարգավիճակին վերաբերող հարցերը:: ***Թեմա 10***՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների անվտանգության հարցերը համակարգող մարմինների քաղաքական-իրավական կարգավիճակը, ԱՄՆ անվտանգության ապահովման համակարգի ձևավորման սկզբունքները: ԱՄՆ անվտանգության հարցերը համակարգող կառույցները և լիազորությունների տարանջատումը –

**վերջնարդյունք**՝ Ծանոթանալ ԱՄՆ անվտանգության փափուկ քաղաքականության հիմնադրույթներին,Կարողանալ տարանջատել ԱՄՆ անվտանգության համակարգի մեջ մտնող դերակատարներին ու դրանց պատասխանատվության շրջանակները: ***Թեմա 11***՝ Հետխորհրդային որոշ պետությունների անվտանգության ապահովումը համակարգող մարմինները, Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի քաղաքական-իրավական կարգավիճակը և կազմը: Ուկրաինայի և Ղազախստանի Հանրապետության անվտանգության քաղաքականությունը համակարգող մարմինները: Ղրղզստանի, Մոլդովայի և Տաջիկստանի հանրապետությունների անվտանգության ապահովման կառույցները – **վերջնարդյունք**՝ Ծանոթանալ ՌԴ և որոշ այլ հետխորհդային երկրների անվտանգության քաղաքականություններին,Կարողանալ գնահատել մի շարք տարրերի ՀՀ-ում կիրարկման հնարավորությունները: ***Թեմա 12***՝ Անվտանգության համակարգման մարմինների գործառությունը արտասահմանյան մի շարք երկրներում, Իրանի և Թուրքիայի անվտանգության համակարգող մարմինները: Իսրայելի, Լեհաստանի և Հարավային Կորեայի անվտանգության խորհուրդների կազմավորումն ու գործունեությունը – **վերջնարդյունք**՝ Ծանոթանալ արտասահմանյան զարգացած ու Հարավային Կովկասին առնչվող մի շարք երկրների անվտանգության համակարգերին,Կարողանալ տարբերակել այդ երկրներում վարվող քաղաքականության հիմնատարրերը: ***Թեմա 13***՝ Եվրոպական անվտանգության համակարգին Հայաստանի մերձեցման գործընթացը, Եվրոպական անվտանգության համակարգին Հայաստանի Հանրապետության մերձեցման գործընթացը: Հայաստանի արդի հնարավորությունները եվրոպական անվտանգության կառույցների հետ փոխգործակցության հեռանկարում – **վերջնարդյունք**՝ Իմանալ Հայաստանի կողմից Եվրոպական անվտանգության ձնաչափին ինտեգրման տեսլականները, Տիրապետել Եվրոպայի անվտանգության արժեհամակարգի հիմնական բաղադրիչները:: ***Թեմա 14***՝ Հարավկովկասյան տարածաշրջանային անվտանգության կառուցման հնարավոր ուղենիշները, Հարավկովկասյան տարածաշրջանային համակարգային անվտանգության կառուցման հնարավորությունները: Եվրոպական անվտանգության կառույցները Հարավկովկասյան տարածաշրջանում: Հայաստանի մասնակցությունը Հարավկովկասյան տարածաշրջանային անվտանգության ձևավորմանը – **վերջնարդյունք**՝ Ծանոթանալ Հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգության հաստատման ձնաչափային զարգացումներին,
Կարողանալ գնահատել Հայաստանի դերը ու հնարավորությունները տարածաշրջանային անվտանգության համատեքստում: ***Թեմա 15***՝ Հայաստանի Հանրապետություն - Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպություն, Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունը տարածաշրջանային անվտանգության համատեքստում: Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին: ՀՀ - ՀԱՊԿ փոխգործակցության հնարավոր զարգացումները – **վերջնարդյունք**՝ Իմանալ ՀԱՊԿ-ի կայացման ու արդի գործառնական հիմնահարցերը, Տիրապետել ՀՀ անվտանգության համատեքստում ՀԱՊԿ հնարավորությունների օգտագործման շրջանակները: ***Թեմա 16***՝ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը միջազգա¬յին անվտանգության համակարգում: Հյուսիսատլանտյան դաշինքի

կազմակերպության կառուցվածքն ու գործունեությունը: ՆԱՏՕ-ի Հայաստանի համագործակցության նշանակությունը անվտանգության ապահովման գործում – **վերջնարդյունք**՝ Ձևավորել ՆԱՏՕ-ի կազմավորման, մասնակից պետությունների ու իրականացվող ծրագրերի վերաբերյալ գիտելիքները, Տիրապետել Հյուսիսատլանտյան դաշինքի հետ Հայաստանի գործակցության հիմնահարցերը: ***Թեմա 17՝*** Հայաստանի Հանրապետություն - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը միջազգային անվտանգության քաղաքականության մեջ: Հայաստանի Հանրապետություն - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն գործակցության սկզբնավորումը: ՀՀ – ԵԱՀԿ կապերի ապահովման արդի կառուցակարգերը – **վերջնարդյունք**՝ Ծանոթանալ ԵԱՀԿ-ի կոչվածությանը և դերին Եվրոպական անվտանգության հաակարգում, գործունեության հիմնական ուղղություններին,
Տիրապետել ՀՀ-ԵԱՀԿ գործակցության հիմնական բանաձևերին, այդ կապի ազդեցության ՀՀ անվտանգության համակարգում: ***Թեմա 18՝*** Ղարաբաղյան հակամարտության ծագման և հետագա զարգացումների պատմական ակնարկ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության առանձնացումը Հայաստանի ազգային անվտանգության համատեքստում: ԼՂՀ հռչակման իրավաքաղաքական հիմնավորումը: Ղարաբաղյան հակամարտության ակտիվ պատերազմական փուլի ռազմական ու ռազմաքաղաքական նկարագիրը – **վերջնարդյունք**՝ Իմանալ ՀՀ անվտանգության համար հատուկ կարևորություն ունեցող Ղարաբաղյան հիմնախնդրի պատմաիրավական ու քաղաքական զարգացումները,
Կարողանալ գնահատել այդ հիմնախնդրի հիմք հանդիսացող իրադարձություններն ու փաստերը: ***Թեմա 19՝*** Մինսկի խմբի ձևաչափը և ԼՂ հակամարտության կարգավորման տեսլականը, Մինսկի խմբի ստեղծումը և նրա դերը Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում: Հայկական երկու հանրապետությունների (ՀՀ և ԼՂՀ) դիրքորոշումները Մինսկի խմբի ձևաչափում ԼՂ հակամարտության կարգավորման հեռանկարի մասին – **վերջնարդյունք**՝ Ծանոթանալ Մինսկի խմբի հովանու ներքով Ղարաբաղյյան հակամարտության բանակցային ձևաչափին,
Տիրապետել տեսագործնական գիտելիքներ հակամարտության կարգավորման քննարկվող փաթեթների և դրանց վերաբերյալ կողմերի դիրքորոշումների մասին:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**17/H25. Իրավունքը կառավարման գործընթացում** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

ուսումնասիրել և տեսակիրառական գիտելիքներ փոխանցել անձի իրավուքների էության, պետական կառավարման ձևի, ռեժիմի ու դրանց իրավահամեմատական գնահատումների, իշխանության երեք թևերի փոխհամաձայնեցված գործունեության և սահմանադրական արդարադատության առանձնահատկությունների վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. Կիմանան**

- Անձի իրավուքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունը:
- Քաղաքացիության սահմանադրաիրավա-կան հասկացությունը: Քաղաքացիության ձեռքբերումը և դադարեցումը:
- Պետության կառավարման ձևի հասկացությունը և տեսակները:
- Պետության տարածքային կառուցվածքի ձևի հասկացությունը և տեսակները:
- Պետական ռեժիմը՝ որպես պետության ձևի առանձնահատուկ տարր: Պետական ռեժիմ և քաղաքական ռեժիմ:
- Խորհրդարանի հասկացությունը և ներկայացուցչական բնույթը: Խորհրդարանի իրավասությունները:
- Պետության գլխի հասկացությունը և տեղը պետական իշխանության համակարգում:
- Կառավարության հասկացությունը, նշանակությունը և տեսակները:
- Դատական իշխանության սոցիալական դերը, կառուցվածքը և տեղը պետական իշխանության համակարգում:
- Սահմանադրական արդարադատության հասկացությունը և սոցիալական գործառույթը: <<Սահմանադրական հսկողություն>> և <<սահմանադրական վերահսկողություն>>:

**2. Կկարողանան**

- Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների դասակարգումը:
- Ունիտար պետությունը և դրա տեսակները:
- Միապետությունը և դրա տեսակները:
- Հանրապետությունը և դրա տեսակները:
- Դաշնային պետությունը և դրա տեսակները:
- Խորհրդարանի կառուցվածքը: Պալատները և հանձնաժողովները:
- Պատգամավորի սոցիալական նշանակութ-յունը և կարգավիճակը:
- Կառավարության կազմավորման կարգը, կազմը և իրավասությունները:
- Սահմանադրական դատարանների կազմավորման կարգը և լիազորությունները:

**3. Կտիրապետեն**

- մարդու իրավունքների և քաղաքացու իրավունքների,
- պետական ռեժիմների դասակարգման,
- խորհրդարանի իրավասությունների պատվիրակման,
- խորհրդարանի ակտերի,
- օրենսդիր, գործադիր և դատական իշխանության զսպումների ու հակակշիռների մասին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** Անձի իրավունքները, ազատությունները և պարտականությունները: 1. Անձի իրավուքների էությունը: <<Մարդու իրավունքներ>> և <<քաղաքացու իրավունքներ>>:

2. Անձի իրավուքների, ազատությունների և պարտականությունների հասկացությունը:

3. Անձի իրավուքների, ազատությունների և պարտականությունների հավասարությունը և երաշխիքները:

4. Անձի իրավունքների, ազատությունների և պարտականությունների դասակարգումը: – **վերջնարդյունք՝** Ծանոթանալ անձի և քաղաքացու հիմնական իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի բնութագրումներին, տեսական գիտելիքներով տիրապետել մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից բծող դրույթների, իրավունքների լայն և նեղ իմաստներով սահմանումներին: ***Թեմա 2՝*** Քաղաքացիության ինստիտուտը և օտարերկրացիների ռեժիմը: 1. Քաղաքացիության սահմանադրաիրավա¬կան հասկացությունը: 2. Քաղաքացիության ձեռքբերումը և դադարեցումը: 3. Ոչ քաղաքացիների սահմանադրաիրա¬վա¬կան կարգավիճակը: – **վերջնարդյունք՝** Իմանալ պետության և քաղաքացու իրավական կապ հանդիսացող ինստիտուտի՝ քաղաքացիության մասին տեսագործնական գիտելիքներ, Կարողանալ վերլուծել քաղաքացիության կազմակերպական պահովման առանձնահատկությունները:

***Թեմա 3՝*** Պետության կառավարման ձևը: 1. Պետության կառավարման ձևի հասկացությունը և տեսակները: 2. Միապետությունը և դրա տեսակները:

3. Հանրապետությունը և դրա տեսակները: – **վերջնարդյունք՝** Վերլուծել պետության կառավարման ձևերը, դրանցում իշխանությունների հարաբերակցման մոտեցումները, քաղաքական պատասխանատվության շրջանակները,

Տիրապետել կառավարման միապետական ու հանրապետական ձևերում իշխանությունների հարաբերակցման կառուցակարգերին ***Թեմա 4՝*** Պետության տարածքային կառուցվածքի ձևը, պետական ռեժիմը: 1. Պետության տարածքային կառուցվածքի ձևի հասկացությունը և տեսակները:2. Ունիտար պետությունը և դրա տեսակները:3. Դաշնային պետությունը և դրա տեսակները:4. Պետական ռեժիմը՝ որպես պետության ձևի առանձնահատուկ տարր: Պետական ռեժիմ և քաղաքական ռեժիմ:5. Պետական ռեժիմների դասակարգումը: – **վերջնարդյունք՝** Իմանալ պետության տարածքային կառուցվածքի և ռեժիմի հիմնադրույթները, դրանց տարբերակման հիմնական չափանիշները, Կարողանալ գնահատել պետության ռեժիմների դասակարգումները, դրանցում քաղաքական իշխանության դերակատարներին վերաբերող իրավաքաղաքական տարբերակումները ***Թեմա 5՝*** Խորհրդարանի հասկացությունը և սոցիալական գործառույթը: Խորհրդարանի կառուցվածքը և պատգամավորի կարգավիճակը: 1. Խորհրդարանի հասկացությունը և ներկայացուցչական բնույթը:2. Խորհրդարանի իրավասությունները:3. Խորհրդարանի իրավասությունների պատվիրակումը: Խորհրդարանի ակտերը:4. Խորհրդարանի կառուցվածքը: Պալատները և

հանձնաժողովները:5. Պատգամավորի սոցիալական նշանակութ-յունը և կարգավիճակը:– **վերջնարդյունք՝** Ծանոթանալ օրենսդիր իշխանության դերին ու կոչվածությանը, ձևավորման մոտեցումներին, գործառնական ու քաղաքական պատասխանատվության առանձնահատկություններին,
Կարողանալ նախանշել խորհրդարանի՝ որպես ժողովրդի իշխանության առանջնային ներկայացնողի իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական նշանակությունը ***Թեմա 6՝*** Գործադիր իշխանության գործառնական առանձաժնահատկությունները (պետության գլուխը և կառավարությունը): 1. Պետության գլխի հասկացությունը և տեղը պետական իշխանության համակարգում: 2. Միապետը. նրա կարգավիճակը և իրավասությունները: 3. Նախագահը. նրա կարգավիճակը և իրավասությունները: 4. Կառավարության հասկացությունը, նշանակությունը և տեսակները: 5. Կառավարության կազմավորման կարգը, կազմը և իրավասությունները: – **վերջնարդյունք՝** Իմանալ գործադիր իշխանության ձևավորման ու գործունեության հիմնահարցերը, կառուցվածքային տարրերի նպատակային միասնականության պահանջը,
Կարողանալ գնահատել գործադիր իշխանության մարմինների կողմից իշխանության մյուս թևերի հետ հարաբերակցության շրջանակները: ***Թեմա 7՝*** Դատական իշխանության ընդհանուր բնութագիրը: 1. Դատական իշխանության սոցիալա¬կան դերը, կառուցվածքը և տեղը պետական իշխանության համակարգում:2. Դատական համակարգի կազմավորման և գործունեության սահմանա-դրա¬իրավական սկզբունքները – **վերջնարդյունք՝**
Ծանոթանալ դատական իշխանության կայացմանը, գործունեության կազմակերպմանը վերաբերող օրենսդրական կարգավորումները,
Տիրապետել կառավարչական գործունեության համատեքստում արդարադատության և դրա իրականացնող կառույցների կարգավիճակայի հարցերին: ***Թեմա 8՝*** Սահմանադրական արդարադատությունը: ***1.***Սահմանադրական արդարադատու¬թյան հասկացությունը և սոցիալական գործառույթը: <<Սահմանադրական հսկողություն>> և <<սահմանադրական վերահսկողություն>>: 2. Սահմանադրական դատարանների կազմավորման կարգը և լիազորությունները – **վերջնարդյունք՝** Իմանալ սահմանադրական արդարադատության ինստիտուցիոնալ առանձանհատկությունները, նշանակությունը կառավարման համակարգի խնդիրների գնահատման գործընթացում,
Կարողանալ վերլուծել սահմանադրական արդարադատության ապահովման՝ հսկողություն և վերահսկողություն գործառույթները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**17/H26. Հանրային կապեր** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում մագիստրանտին համակարգային գիտելիքներ հաղորդել PR-ի զարգացման պատմության, առարկայի հիմնական հասկացությունների, հանրային հաղորդակցման սկզբունքների, արդյունավետ հաղորդակցման փուլերի, PR-ի առանցքային գործիքակազմի, գովազդի և իմիջի բաղադրիչների, բրենդինգի, ինչպես նաև հասարակական կարծիքի ձևավորման վրա վերջիններիս ներգործության կառուցակարգերի մասին: Հատուկ ուշադրություն է դարձվում մագիստրանտի գործնական պատրաստմանը:

Դասընթացը ունի գործնական ուղղվածություն և նախատեսում է տեսական գիտելիքները փորձարկել՝ կատարելով PR նախագծեր, ուսումնասիրելով հանրային կապերի ինստիտուտի հայաստանյան օրինակներ, հանրահայտ բրենդների հաջողության պատմությունները, որևէ կազմակերպության PR արշավի պլանը, մամուլի փաթեթ կազմելու հմտությունները և այլն:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի յուրացման արդյունքում քաղաքագետ մագիստրանտը.

**1. ԿԻՄԱՆԱ**

PR-Ç հիմնական տերմինաբանական պարզաբանումները և առարկայի ձևավորման պատմական ակունքները, մասնագիտությունների բնութագրիչները, PR-ին առնչակից մասնագիտություններն ու հասկացությունները. դրանց նմանություններն ու տարբերությունները, PR- ի հիմնական գործիքակազմը, ԶԼՄ-ների հետ աշխատանքի առանձնահատկություններն ու կարևորությունը, գովազդի տեսակները, մեդիապլանավորման դերը, բրենդինգ հասկացությունը և իմիջի հիմնական բաղդրիչները /անձի, կազմակերպության, երկրի/, ռազմավարական պլանավորման փուլերը PR-ում, արդյունավետ հաղորդակցման փուլերը, հանրային կապերի կառավարման գործում հասարակական կարծիքի ձևավորման նպատակների և փուլերի մասին, ինչպես նաև գաղափար կկազմեն PR-ի ոլորտում մասնագիտական վարքագծի եվրոպական կոդեքսի (Լիսաբոնյան կոդեքս) և Հասարակայնության հետ կապերի միջազգային ասոցիացիայի (IPRA) մասնագիտական վարքագծի կոդեքսի մասին:

**2. ԿԿԱՐՈՂԱՆԱՆ**

Աշխատել ԶԼՄ-ների հետ, կազմակերպել մամուլի ասուլիսներ, կազմել մամլո հաղորդագրություններ, կազմակերպել շնորհանդեսներ, նախագծել

կազմակերպության ռազմավարական PR-ը և իրականացնել այն, ճիշտ կազմակերպել կազմակերպության հանրային հաղորդակցման բոլոր փուլերը, խորհուրդներ տալ հակաճգնաժամային PR-ի պարագայում:

**3.ԿՏԻՐԱՊԵՏԵՆ**

ԶԼՄ-ների տարբեր տեսակների ներգործության յուրահատկություններին, PR գործիքակազմին, դրանց կիրառման հնարավորություններին, կկազմակերպի PR-միջոցառումներ և կկարողանա գնահատել դրանց արդյունավետությունը: Բովանդակությունը.

***Թեմա 1*** ՝ Ներածություն. PR կամ հանրային կապեր. ուսումնասիրության առարկան, խնդիրները, մեթոդները: Հանրային կապերի ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում ***վերջնարդյունք***՝ Կիմանա PR-ի ուսումնասիրության հիմնական առարկան, խնդիրները, կկարողանա տարբերակել գովազդը, մարքեթինգը, լրագրությունն ու քարոզչությունը PR-ից: ***Թեմա 2***՝ PR-ի գործիքակազմը /ԶԼՄ-ների հետ աշխատանք, event –միջոցառումներ, իմիջային գովազդ, բարեգործական ակցիաներ, ներքին PR, պրոմո և PR –կոմպանիաներ, համացանցային տարածքում առաջխաղացում, ֆիրմային ոճ և գույնի հոգեբանություն և այլն/, **վերջնարդյունք**՝ Կիմանա PR- ի հիմնական գործիքակազմը, կտիրապետի դրանց կիրառման հնարավորություններին ***Թեմա 3***՝ PR, ԶԼՄ-ներ և հասարակություն: Հանրային հաղորդակցության հիմնական սկզբունքները: RACE համակարգի էությունը, **վերջնարդյունք**՝ Կիմանա ԶԼՄ-ների հետ աշխատանքի առանձնահատկություններն ու կարևորությունը, կտիրապետի ԶԼՄ-ների տարբեր տեսակների ներգործության յուրահատկություններին, կիմանա և կկարողանա արդյունավետ հաղորդակցվել ***Թեմա 4***՝ ԶԼՄ-ների հետ հարաբերությունների ձևավորում: Մեդիա նյութեր: **վերջարդյունք**՝ Կիմանա ԶԼՄ-ների հետ աշխատանքի առանձնահատկությունները, կկարողանա կազմկել մեդիա փաթեթ, մամլո հաղորդագրություն, կազմակերպել մամուլի ասուլիս, ***Թեմա 5***՝ Ռազմավարական պլանավորում: **վերջնարդյունք**՝ Կիմանա ռազմավարական պլանավորման փուլերը, սկզբունքները, գործիքը, կկարողանա կազմել կարճաժամկետ և երկարաժամկետ պլաններ ***Թեմա 6***՝ PR, համացանց և գովազդ: **վերջնարդյունք**՝ Կիմանա գովազդի տեսակները, կտիրապետի համացանցային գովազդի առավելություններին և թերություններին,կկարողանա կազմել գովազդային ***Թեմա 7***՝ Բրենդ և բրենդինգ: Իմիջ և PR: Կորպորատիվ իմիջ: Գործարար իմիջ: Անհատական իմիջ: **վերջնարդյունք**՝ Կհասկանա, թե ինչ է բրենդը, կիմանա բրենդի կառուցման փուլերը, կծանոթանա բրենդի ռազմավարությանը: Կծանոթանա իմիջի տեսակներին, ***Թեմա 8***՝ ԶԼՄ-ների հետազոտություն. Հանրային կապերի հետազոտություն, հետազոտության պաշտոնական և ոչ պաշտոնական մեթոդներ: PR գործունեության գնահատման մեթոդներ: Առարկայի ամփոփում: Հետադարձ կապ: **վերջնարդյունք**՝ Կիմանա հանրային կապերի հետազոտության պաշտոնական և ոչ պաշտոնական մեթոդները, կծանոթանա PR գործունեության գնահատման մեթոդներին, կկարողանա գնահատում իրականացնել

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**17/H30. Քաղաքական լիդերություն. հիմնախնդիրները** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

բացահայտել լիդերության էությունը, տիրապետել կառավարելու, հրամայելու և տնօրինելու որոշակի իրավունք:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանան** իմանալ լիդերության հասնելու ուղիները,
2. **կարողանան** կարողանալ կիրառել ձեռք բերած հմտությունները
3. **կտիրապետեն** տիրապետել ազգային մենտալ իտետի ար-եքային բնեռները:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ***Թեմա 2՝*** Իշխանության և իշխանական հարաբերությունների իրականացման արժեքային համակարգը – **վերջնարդյունք՝** Իշխանության կազմակերպման ձևերը, իշխանական հարաբերությունների կարգավորման պետաիրավական հիմքերը ***Թեմա 3՝*** Քաղաքականությունը և բարոյականությունը իշխանական հարաբերություններում – **վերջնարդյունք՝** Քաղաքական էլիտայի իշխանության իրացման մշակույթը, արժեքների և նորմերի իրացումը քաղաքական հարաբերությունների կառուցման ժամանակ ***Թեմա 4՝*** Լիդերության կայացման էվոլուցիան քաղաքական զարգացման գործընթացում – **վերջնարդյունք՝** Լիդերների կայացման էվոլյուցիան քաղաքական գործընթացում ***Թեմա 5՝*** Քաղաքական լիդերի կայացման շարժառիթները – **վերջնարդյունք՝** Քաղաքական լիդերների տիպաբանությունը, քաղաքական համակարգում նրանց կայացման շարժառիթները ***Թեման 6՝*** Քաղաքական լիդերի և էլիտայի փոխհարաբերությունները քաղաքական գործընթացներում – **վերջնարդյունք՝** Քաղաքական լիդեր իմիջը, նրա տեղն ու դերը քաղաքական գործընթացներում, էլիտայի հետ փոխհարաբերությունները, ***Թեման 7՝*** Հ Քաղաքական մշակույթը ժողովրդական անցումից համախմբում գործընթացում. արժեքային համակարգի փոփոխությունը Հայաստանի Հանրապետությունում – վերջնարդյունք՝ Քաղաքական մշակույթ, հումանիզմ, մշակութային արժեքային համակարգ, էվոլյուցիոն փոփոխությունները էվոլյուցիոն փուլերում , ***Թեման 8՝*** Ազգային մտահայեցողությունը (մենտալիտետը) կառավարող էլիտայի վարքաբանությունում – **վերջնարդյունք՝** Ազգային մենթալիտետ, էլիտայի

վարքաբանություն, ազգային մտահայեցողությունը քաղաքական էլիտային վարքաբանությունում ***Թեման 9*** Արարիչ <<Ես>>-ի գերակայությունը հայկական մենտալիտետում – վերջնարդյունք՝ Ես-ի և հանրայինի գերակա շահերը, ազգային մտահայեցողության հայեցակարգը, ***Թեման 10՝*** Հոգևոր Հայաստանի գաղափարախոսության արժեքաբանությունը – **վերջնարդյունք՝** Անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ արդիականացող հայ ազգային ինքնության հիմքերը այդ համակարգում հոգևոր հոգևոր գաղափարախոսության արժեքաբանությունը

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**17/H33. ՀՀ կառավարման համակարգը** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Համակողմանի ներկայացնել և յուրացնել ՀՀ կառավարման համակարգի էությունը, բովանդակությունը և արդի դարաշրջանում դրա զարգացման հիմնական միտումները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանան –** դասընթացի նպատակը, խնդիրները, գործառույթները, ինչպես նաև տեսական և գործնական նշանակությունը:

2. **Կկարողանան** – յուրացնել դասընթացի բովանդակությունը, գործող օրենսդրությունը և իրավական պրակտիկայի հիմունքները:

3. **Կտիրապետեն** - դասընթացի նյութին, տեսական գիտելիքներին, գործնական հմտություններին

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** ՀՀ կառավարման համակարգի հասկացությունը, **վերջնարդյունքը՝** Ուսանողները պետք է գիտենան պետական կառավարման համակարգի սահմանումը, գործառույթները: **Թեմա 2՝** ՀՀ կառավարման համակարգի մարմինները, **վերջնարդյունքը՝** Ուսանողները պետք է գիտենան պետական կառավարման համակարգի գործառույթներն իրականացնող մարմինները և վերջիններիս գործունեության շրջանակները: ***Թեմա 3՝*** ՀՀ կառավարությունը ՀՀ կառավարման մարմինների համակարգում, **վերջարդյունքը՝** Ուսանողները պետք է գիտենան ՀՀ կառավարության՝ որպես ՀՀ կառավարման պետական համակարգի մարմնի, գործառույթները և լիազորությունները: ***Թեմա 4՝*** ՀՀ կառավարության կառուցվածքը եվ գործունեության կարգը, **վերջնարդյունք՝** Ուսանողները պետք է

գիտենան ՀՀ կառավարության՝ որպես ՀՀ կառավարման պետական համակարգի մարմնի, գործառույթները և լիազորությունները: **Թեմա 5՝** ՀՀ կառավարության իրավասությունը, վերջնարդյունք՝ Ուսանողները պետք է գիտենան ՀՀ կառավարության՝ որպես ՀՀ կառավարման պետական համակարգի մարմնի, գործառույթները և լիազորությունները: ***Թեմա 6՝*** ՀՀ կառավարության եվ վարչապետի ակտերը, **վերջարդյունք՝** Ուսանողները պետք է գիտենան ՀՀ կառավարության ընդունած իրավական ակտերի էությունը, տեղն ու դերը պետության միասնական իրավունքի համակարգում: ***Թեմա 7՝*** Պետական կառավարման համակարգի մարմինները, **վերջնարդյունք՝** Ուսանողները պետք է գիտենան ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինները՝ նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները: ***Թեմա 8՝*** Կառավարությանն եվ վարչապետին ենթական մարմինները, **վերջնարդյունք՝** Ուսանողները պետք է գիտենան ՀՀ Կառավարության և ՀՀ վաչապետին ենթական մարմինների ցանկը և վերջիններիս գործունեություն ոլորտներին համապատասխան օրենքները: ***Թեմա 9՝*** Նախարարությանը ենթական մարմինները, **վերջնարդյունք՝** Ուսանողները պետք է գիտենան բոլոր նախարարությունների ենթակայության տակ գործող մարմինները և դրանց լիազորությունները: ***Թեմա 10՝*** ՀՀ պետական կառավարման տարածքային կազմակերպումը **վերջնարդյունք՝** Ուսանողները պետք է գիտենան, թե որոնք են ՀՀ պետական կառավարման տարածքային մարմինները և ինչպես է կարգավորվում վերջիններիս գործունեությունը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**17/H35. Խոսքի վարպետություն** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ներկայացնել խոսքի վարպետության, հռետորական արվեստի և բանավեճի էթիկայի կարևորությունը և տիրապետման անհրաժեշտությունը: Հրապարակային խոսքի արվեստի տիրապետումն այսօր անհրաժեշտություն է՝ պայմանավորված կառավարման տարբեր համակարգերում խոսքի հմտությունների դրսևորման և հաղորդակցման կարևորության առումով: Արդի ժամանակաշրջանում խոսքի վարպետությունը և հռետորական հմտություններն առավել պահանջված են, քանզի տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացմանը համարժեք պահանջվում է նաև ճարտասանության նորովի կիրառում՝ հիմնված մ.թ.ա.5-րդ դարում Հին Հունաստանում ձևավորված և մինչև XXI դ. հասած հռետորության դասական ձևակերպումների, ըմբռնումների և հաղորդակցման գաղափարի վրա:

Դասընթացի շրջանակներում ուսանողները կուսումնասիրեն խոսքի վարպետություն ձեռք բերելու բոլոր հնարքներն ու մեխանիզմները, կծանոթանան դասական ճարտասանական արվեստի նմուշներին և նոր ճարտասանական արվեստի ձևերին, կզարգացնեն վերլուծական ունակություններ, կկատարեն դասական և ժամանակակից ճարտասանական խոսքի համեմատական վերլուծություններ, ձեռք կբերեն բանավոր խոսքի տիրապետման, ինչպես նաև՝ բանավեճային էթիկայի հմտություններ:

**Կրթական արդյունքները.**

1.**Գիմանան**

• հանրային կյանքում ճարտասանական արվեստի ունեցած դերի մասին՝ հնագույն /հունական,հռոմեական,հայկական/ և արդի ժամանակաշրջանի ճարտասանների օրինակով,

• ճարտասանական արվեստի բաժինները, պահանջները, դասական սահմանումները, ըմբռնումները, գործառույթները և խնդիրները,

• ժամանակակից ճարտասանի պարտավորությունները և նրանց նկատմամբ հանրության ունեցած պահանջները

• խոսքի կառուցման և ներկայացման բոլոր հնարավոր տարբերակները, փաստարկման, հակասությունների բացահայտման եղանակները, ճարտասանական հարցի ձևակերպումը, արտասանության դերն ու կարևորությունը:, ասելիքի կարևորությունը:

2. **Կկարողանան**

• ճիշտ պատկերացնել արդի ճարտասանական արվեստի դերը հասարակական կյանքում,

• ուսումնասիրել, վերլուծել ճարտասանական արվեստում առկա խնդիրները, գտնել այդ խնդիրների պատճառահետևանքային կապը ,

• վերլուծել Հայաստանի և արտերկրների ճարտասանական արվեստի տիպաբանական առանձնահատկությունները, զարգացման միտումները,

• վերլուծել դասական և արդի ճարտասանների ելույթները,

• կազմել և ներկայացնել սեփական խոսքն՝ իր ոճական և արտասանական հնարքներով, հաղորդակցվել լսարանի հետ,

• հստակ և խելամիտ հարցադրումներ ներկայացնել, ինչպես նաև՝ պատասխանել պարզաբանումներ պահանջող հարցերին,

• թեմայի շուրջ բանավեճի մեջ մտնել և դրսևորել հմտություններ բանավեճային արվեստում,

• պահպանել բանավեճի էթիկայի կանոնները,

• հարթել արտասանական թերությունները, ձերբազատվել ուղղախոսական սխալներից,

• կատարել ոճի ճիշտ ընտրություն,

• խոսքում կիրառել արտասանական և շարժուձևի հնարավոր և կիրառելի միջոցները:

**3. Կտիրապետեն**

• խոսքի վարպետությանը,

• ելույթների կառուցմանը,

• նպատակային խնդիրների վերհանմանը,
• միջանձնային խոսքային հաղորդակցմանը,
• բանավոր խոսքում անհրաժեշտ հնարքների կիրառմանը,
• բառերի, բառակապակցությունների, դարձույթների և բառադարձումների ճիշտ գործածությանը,
• ելույթի, մեկնաբանության, երկխոսության, բանավեճի պահանջներին,
• խոսքի տեխնիկայի համապատասխան կիրառմանը,
• ձայնի գործադրմանը, շնչառության կարգավորմանը, առոգանությանը և ուղղախոսությանը,
• ճարտասանական ոճին,
• արտասանական խնդիրների լուծմանը և շարժուձևերի վերահսկմանը

**Բովանդակությունը.**

***Թեմա 1*** ՝ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, Ընդհանուր տեղեկություններ հռետորական արվեստի ձևավորման, զարգացման, պատմության, սոփեստների, Հին աշխարհի հանրաճանաչ հռետորների և հռետորության մեջ իրենց ներդրումն ունեցած հայ ճարտասանների մասին – **վերջնարդյունք**՝ Կիմանա հանրային կյանքումճարտասանական արվեստի ունեցած դերի մասին՝ հնագույն /հունական,հռոմեական,հայկական/ևարդիժամանակաշրջանիճարտասանների օրինակով,կտիրապետի Հինաշխարհիհռետորության պատմությանը: ***Թեմա 2*** ՝ Քաղաքական սոցիոլոգիան ընդհանուր համատեքստում: Ճարտասանական արվեստի պահանջները: Ճարտասանական խոսքի սահմանումը, գործառույթները, տեսակները և ոճը:Արդի ճարտասանության մեջ հաղորդակցման գաղափարի առկայությունը և հետադարձ կապի խնդրի առաջադրումը – **վերջնարդյունք**՝ Կիմանա ճարտասանական արվեստի պահանջները, կտիրապետի միջանձնային խոսքային հաղորդակցմանը: ***Թեմա 3*** ՝Խոսքի վարպետությունը՝ որպես դասական ճարտասանության պահանջներն իրականացնող արդի դրսևորում, Դասական ճարտասանության հինգ բաժինների /գյուտ, դասավորություն, ճոխաբանություն, հիշողություն, արտասանություն/ դրսևորումը և կիրառական նշանակությունը ժամանակակից ճարտասանության մեջ – **վերջնարդյունք**՝ Կիմանա դասական ճարտասանության հինգ բաժինները,կտիրապետի դրանց դրսևորմանը և կիրառականնշանակությանը ժամանակակից ճարտասանության մեջ: ***Թեմա 4*** ՝ Ճարտասանական խոսքի տեսակները և ոճերը, Ճարտասանական խոսքի տեսակներից, յուրաքանչյուրը /համոզել, հաղորդել, հաճույք պատճառել/ ճարտասանին հնարավորություն է տալիս համապատասխան կիրառման դեպքում՝ դիմել համապատասխան լսարանի՝ կայացնելու վճիռ, որոշում, կամ պատճառել հաճույք: Առանձնացվում են են նաև երեք ոճերը, որոնք նույնպես որոշակի դերակատարում ունեն խոսքի կառուցման գործում – **վերջնարդյունք**՝ Կիմանա ճարտասանական խոսքի ոճական և արտասանական հնարքները, կտիրապետի դրանց կիրառմանը: ***Թեմա 5*** ՝ Ճոխաբանությունը՝ որպես խոսքի պատկերավորության արտահայտչամիջոց, փաստարկումը՝ որպես ճարտասանի տեսակետի հիմնավորում, հռետորական հարցը՝ որպես ոճական հնարք, Ճարտասանի խոսքին հուզական արտահայտչականություն և պատկերավորություն հաղորդող երեք ենթաբաժիններն են՝ բառընտրությունը, բառակապակցությունները, դարձույթները և բանադարձումները, որոնք

առանձնահատուկ ազդեցություն են ունենում լսարանի վրա: Փաստարկումը՝ որպես ճարտասանի տեսակետի հիմնավորում, բացահայտում է փաստերի հավաստիությունը և ճշմարտացիությունը: Հռետորական հարցը՝ որպես ոճական հնարք, չի ենթադրում պատասխան – **վերջնարդյունք՝** Կիմանա ճոխաբանության՝ որպես խոսքիպատկերավորությանարտահայտչամիջոցի, փաստարկման՝ որպես ճարտասանի տեսակետի հիմնավորման,հռետորական հարցի՝ որպես ոճական հնարքի կարևորությունը ճարտասանական խոսքում, կտիրապետի դրանց կիրառմանը բանավոր խոսքում: ***Թեմա 6՝*** Շնչառություն: Շեշտադրում: Դադար, Բուն արտասանկան խնդիրներն են՝ճարտասանի ձայնի գործադրումը՝ ուժգնությունը, արագությունը և ելևէջավորումը: Շարժունձնի խնդիրներն են՝ կեցվածքը, դիմախաղը, շարժումները: Դադարները լինում են՝ բնախոսական, քերականական,ձևական, տրամաբանական և հոգեբանական – **վերջնարդյունք՝** Կիմանա արտասանական և շարժուձևի խնդիրները, դադարների տեսակների օգտագործումը, կտիրապետի խոսքում կիրառվող արտասանական և շարժուձևի հնարավոր և կիրառելի միջոցներին: ***Թեմա 7՝*** Խոսքի տեխնիկայի բաղադրիչները, Խոսքի տեխնիկայի բաղադրիչներն են շնչառությունը, ձայնը, առոգանությունը և ուղղախոսությունը: Շնչառության կարգավորումը, ձայնի գործադրման ցուցիչների համապատասխան օգտագործումը և ելևէջավորման փոփոխման միջոցները օգնում են ճարտասանին կազմակերպել խոսքը՝որպես ամբողջություն, ցանկալի երանգավորում հաղորդել ասվածին և ասելիքը տեղ հասցնել – **վերջնարդյուքն՝** Կիմանա շնչառության կարգավորման, ձայնի գործադրման ցուցիչների համապատասխան օգտագործման և ելևէջավորման փոփոխման միջոցների դերը խոսքում,կտիրապետի խոսքի տեխնիկայի բաղադրիչների կիրառմանը: ***Թեմա 8՝*** Առոգանություն և ուղղախոսություն, Առոգանությունը ձայնավորների և բաղաձայնների պարզորոշ հնչեցումն է՝ արտասանություն կանոնավոր շեշտադրությամբ և ելևէջավորմամբ: Ուղղախոսությունը բանավոր խոսքի կարգավորման նորմերի ամբողջությունն է՝ լեզվական համակարգի համար տվյալ ժամանակաշրջանի կանոնավոր համարվող արտասանությունը, շեշտադրությունը և ելևէջավորումը – **վերջնարդյունք՝** Կիմանա կանոնավոր շեշտադրությամբ և ելևէջավորմամբ առոգանության և ուղղախոսության պահանջները, կտիրապետի բանավոր խոսքի կարգավորման նորմերի ամբողջությանը: ***Թեմա 9՝*** Արտասանություն և շարժուձև, Առոգանությունը ձայնավորների և բաղաձայնների պարզորոշ հնչեցումն է՝ արտասանություն կանոնավոր շեշտադրությամբ և ելևէջավորմամբ: Ուղղախոսությունը բանավոր խոսքի կարգավորման նորմերի ամբողջությունն է՝ լեզվական համակարգի համարտվյալ ժամանակաշրջանի կանոնավոր համարվող արտասանությունը, շեշտադրությունը և ելևէջավորումը – **վերջնարդյունք՝** Կիմանա սեփական խոսքի կառուցման և արտասանության համար անհրաժեշտ արտասանական և շարժուձևի հնարավոր և կիրառելի միջոցները, կտիրապետի արտասանական խնդիրների լուծմանը և շարժուձևերի վերահսկմանը: ***Թեմա 10՝*** Բանավեճի էթիկա Որոշակի թեմայի վերաբերյալ հրապարակային քննարկումների, կարծիքների և տեսակետների բախում, կարծիքների հիմնավորում, փաստարկների պնդումների ու ապացույցների ձևակերպում, լսարանի մոտ վիճաբանության առարկա խնդրի վերաբերյալ որոշակի կարծիքի ձևավորում, միմյանց լսելու ընդունակություն և հարգանքի

դրսևորում բանավիճող կողմերի մեջ – վերջնարդյունք՝ Կիմանա խելամիտ հարցադրումներ ներկայացնելու, պարզաբանումներ պահանջող հարցեր առաջադրելու, թեմայի շուրջ բանավեճի մեջ մտնելու և բանավեճային արվեստին տիրապետելու հնարքները, կտիրապետի բանավեճային արվեստի հմտություններին և բանավեճի էթիկային:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից մեկը անց է կացվում գրավոր, մյուսը՝ բանավոր պատասխանի ձևով: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է, որը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը համապա-տասխանաբար գնահատվում է առավելագույնը 4, 3 և 3 միավոր: Գնահատման քայլը 0,5 միավոր է:

**20/H37. Արդյունավետ կառավարում** (4 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին համակարգային գիտելիքներ հաղորդել արդյունավետ կառավարման ժամանակակից մոտեցումների, որոշումների կայացման և դրանց արդյունավետության գնահատման հիմնական սկզբունքների վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանան ժամանակակից, արդյունավետ կառավարման մեթոդներն ու մոտեցումները

2. Կկարողանան պրակտիկ վերլուծություն իրականացնել ձեռքբերված հմտություններով

3. Կտիրապետեն արդյունավետ կառավարման արվեստի բաղադրատարրերին

**Բովանդակությունը.**

***Թեմա 1***՝ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, Արդյունավետ կառավարում. կառավարման հիմունքները, անհրաժեշտությունը, էությունը, մեթոդաբանությունն ու սկզբունքները, մեթոդները, կատեգորիաները ***Թեմա 2***՝ Ֆունկցիոնալ ռազմավարության մշակման առանձնահատկությունները, SWOT, SMART վերլուծությունների ծանոթացում, իրականացում, Սաաթի մեթոդի, KPI համակարգի ուսումնասիրում, գործնական վերլուծություն ***Թեմա 3***՝ Մարդկային գործոնը կառավարման համակարգում, Մենեջմենթ, ինքնամենեջմենթ հասկացությունների հետ ծանոթացում ***Թեմա 4***՝ Լիդերության մեխանիզմները կառավարման գործընթացում, Լիդեր հասկացության էության, չափանիշների, տիպաբանության, մոտիվացիայի ու բաղադրատարրերի հետ ծանոթացում, անձնական հատկանիշների տեսության և վարքաբանական մոտեցման ուսումնասիրում ***Թեմա 5***՝ Ռիսկի էությունը. դասակարգում: Ռիսկի էությունը, տեսակները, ռիսկի կառավարման մեթոդների ուսումնասիրում, ռիսկի

կառավարում և հնարավոր ռիսկի գնահատում, ռիսկի կառավարման մեթոդները ***Թեմա 6՝*** Ղեկավարի գործունեության համար անհրաժեշտ որոշ սոցիալ-հոգեբանական օրենքներ, Կառավարման էության ներկայացումը սոցիալ-հոգեբանական տեսանկյունից ***Թեմա 7՝*** Թիմի սահմանումը և զարգացման փուլերը Արդյունավետ թիմի բնութագիրը, ձևավորման պայմանները ***Թեմա 8՝*** Որոշումների ընդունման ժամանակակից հայեցակարգեր, Որոշումների ընդունման մեխանիզմները, վարքագծային մոտեցում, ռացիոնալ մոտեցում, ***Թեմա 9՝*** Ղեկավարի աշխատանքային ոճ, Աշխատանքային տարբեր ոճերի հետ ծանոթացում, կոնֆլիկտային վիճակների կառավարում, վարքի նպատակահարմար ոճ, ***Թեմա 10՝*** Բանակցման գործընթացը որպես բանակցող կողմերի փոխազդեցության ապահովման ձև և միջոց, Բանակցությունների տեսակների ու գործառույթների ուսումնասիրում, արդյունավետ բանակցությունների չափորոշիչները:

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է մագիստրանտի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**20/H40. Քաղաքական հետազոտության մեթոդներ** (4 կրեդիտ)

*Շաբաթական 6 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

քաղաքական հետազոտությունների մեթոդների ներկայացումը, ինչպես նաև ուսանողների կողմից դրանց կիրառման գործնական հմտությունների ձեռքբերումն ու զարգացումը:

**Կրթական արդյունքները.**

1. **կիմանա**
   - Քաղաքական հետազոտության մեթոդներ» առարկայի ծրագրով նախատեսված տեսական հիմնական նյութը,
   - քաղաքական հետազոտության մեթոդների կիրառման մոտեցումներն ու առանձնահատկությունները:
2. **կկարողանա**

- սահմանազատել հետազոտության դաշտային և կաբինետային տեսակները, քանակական և որակական մեթոդները, տվյալների առաջնային և երկրորդային աղբյուրները և այլն,
- գնահատել քաղաքական տարբեր իրավիճակներն ու գործընթացները,
- գործնականում կիրառել հետազոտության մի շարք մեթոդներ,
- գործառնացնել տարբեր հասկացություններ,
- առաջադրել հիպոթեզներ և ստուգել դրանք:

**3. կտիրապետի**

- քաղաքական հետազոտության մեթոդաբանությանը և հետազոտության ծրագրի մշակման գիտելիքներին,

- SPSS ծրագրով տվյալների մշակման և համապատասխան վերլուծությունների իրականացման հմտություններին և գիտելիքներին,
- քաղաքական հետազոտության մեթոդների կիրառման պրակտիկ հմտություններին:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1*** Քաղաքական հետազոտությունների էությունը, նպատակը, խնդիրները, տեսակները և ուղղությունները – **վերջնարդյունք՝** Քաղաքական հետազոտությունների վերաբերյալ տեսական նյութի գիտելիք :***Թեմա 2՝*** **Հետազոտության ծրագրի մշակումը:** Հետազոտության ծրագրի և աշխատանքային պլանի մշակում: Հետազոտության օբյեկտը և առարկան: Փոփոխականների տեսակները և դրանց փոխկապվածության տարբերակները: Փոփոխականների գործառնացումը, հիպոթեզների առաջադրումը, չափման մակարդակները, սխալները և հուսալիությունը: Տեղեկատվության ձեռք բերման հիմնական աղբյուրները: Տեղեկատվության մշակման և վերլուծության մեթոդների հիմնական խմբերը: – **վերջնարդյունք՝** Հետազոտության ծրագրի մշակման գիտելիք և կարողություն ***Թեմա 3՝*** **Հետազոտության որակական մեթոդները** Խորքային հարցազրույցն ու ֆոկուս խմբերի մեթոդը, SWOT-անալիզը, փորձագիտական հարցումը: Այս թեմայի շրջանակներում ուսանողները ոչ միայն տեսականորեն կծանոթանան վերը նշված մեթոդներին, այլև գործնականում կկիրառեն դրանք:– **վերջնարդյունք՝** Հետազոտության որակական մեթոդների մասին գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն ***Թեմա 4՝*** **Քաղաքական հետազոտությունների վիճակագրական մեթոդները. Միաչափ բաշխվածության վերլուծությունը** Նոմինալ, կարգային և ինտերվալային չափման մակարդակները: Դիսպերսիայի և վարիացիայի գործակցի որոշումը, քվարտիլային միջակայքերի և քվարտիլային ռանգերի սահմանումը, ստանդարտ շեղումը կամ միջին քառակուսային շեղումը որպես միջինի շուրջ ցրվածության չափման եղանակներ՝ նոմինալ, կարգային և ինտերվալային մակարդակներում: Մոդայի, միջնաթվի և միջին թվաբանականի որոշումը որպես միջին մեծության հաշվարկման եղանակներ: Այս թեմայի շրջանակներում ուսանողները ոչ միայն տեսականորեն ծանոթանում են վերը նշված մեթոդներին, այլև գործնականում կիրառում են դրանք – **վերջնարդյունք՝** Քաղաքական հետազոտության մեթոդների մասին գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն ***Թեմա 5՝*** **Քաղաքական հետազոտությունների վիճակագրական մեթոդները. Կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծությունները** Կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծությունների էությունը: Վիճակագրական տեղեկատվության մշակման SPSS ծրագրային փաթեթը: Ծանոթացում և աշխատանք տվյալների բազաների հետ (ՀԲ, Եվրաստատ, ՀՀ վիճակագրական կոմիտե): Այս թեմայի շրջանակներում ուսանողները ոչ միայն տեսականորեն կծանոթանան վերը նշված մեթոդներին և տվյալների բազաներին, այլև գործնականում կկիրառեն դրանք – **վերջնարդյունք՝** Քաղաքական հետազոտության քանակական մեթոդների մասին գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն ***Թեմա 6՝*** **Ինդեքսների կառուցման մեթոդը** Ինդեքսների կառուցման մեթոդի էությունը, քաղաքական չափումներում և վերլուծություններում կիրառվող հիմնական

ինդեքսները, դրանց մեթոդաբանությունը: Այս թեմայի շրջանակներում ուսանողները կիավաքագրեն ինդեքսների տվյալները և կիրականացնեն բովանդակային և ռեգրեսիոն վերլուծություններ:– **վերջնարդյունք՝** Ինդեքսների կառուցման և մոդելավորման վերաբերյալ գիտելիք, գործնական կիրառման հմտություն և կարողություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է մագիստրանտի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

## Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

**17/H 31. Պառլամենտարիզմ** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

նկարագրել Ազգային ժողովի մարմնի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, վեր հանել տվյալ դեպքում Սահմանադրության և Ազգային ժողովի Կանոնադրության մեջ առկա այդ մարմինների գործունեության և կարգավիճակի հետ կապված առանձնահատկությունները, ինչպես նաև համեմատություն ներկայացնել այլ պետությունների փորձի հետ՝ առանձնացնելով ՀՀ և համեմատվող երկրների օրենսդրական կարգավորումները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** պառլամենտարիզմ ինստիտուտի ուսումնասիրման հիմնական մեթոդաբանությունը, Ազգային ժողովի մարմնի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում:
2. **կկարողանա** ուսումնասիրել պառլամենտարիզմ ինստիտուտի հետազոտական մեթոդաբանությունը և զարգացման օրինաչափությունները, Ազգային ժողովի մարմնի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում
3. **կտիրապետի** ինչպես պառլամենտարիզմ ինստիտուտին, այնպես էլ՝ Ազգային ժողովի մարմնի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1՝* Իրավաստեղծ գործունեության հասկացությունը, էությունը, տեսակներն ու առանձնահատկությունները – **վերջնարդյունք՝** Սահմանադրաիրավական գործունեության հասկացության էությունը, կառավարման համակարգի ձևավորման սահմանադրաիրավական հիմքերը:*Թեմա 2՝* Խորհրդարանի հասկացությունը, ներկայացուցչական բնույթը և իրավասությունները –

**վերջնարդյունք՝** Խորհրդանական կառավարման համակարգի գործունեությունն ու կառուցվածքը, իրավասությունները, սահմանադրաիրավական հիմքերը ***Թեմա 3*** ՝ Իշխանության բաժանման կառուցակարգի էությունը և օրենսդիր մարմնի տեղը պետական իշխանության համակարգում – **վերջնարդյունք՝** Իշխանությունների բաժանման սկզբունքը, Իշխանությունների բաժանման և հավասարակշռման հայեցակարգի պատմատեսական և իրավական վերլուծություն, օրենսդիր մարմինը՝ որպես պետական իշխանությունը կարգավորող գործոն ***Թեմա 4*** ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի կազմավորման և գործունեության սահմանադրական ու կազմակերպական հիմքերը – **վերջնարդյունք՝** Պետական կառավարման մոդելների արդյունավետությունը, օրենսդիր մարմինների կազմակերպման ձևերը ***Թեմա 5*** ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների սահմանադրաիրավական կարգավիճակը – **վերջնարդյունք՝** ՀՀ Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների իրավունքներն ու պարտականություններ, ՀՀ սահմանադրությամբ կարգավորվող ընդհանուր դրույթները ***Թեմա 6*** ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակի բաղադրիչները – **վերջնարդյունք՝** ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների իրավունքներն ու պարտականությունները ՀՀ սահմանադրությամբ կարգավորվող ընդհանուր դրույթները ***Թեմա 7*** ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների և խմբերի հիմնական լիազորությունները – **վերջնարդյունք՝** ՀՀ Ազգային ժողովի օրենսդրական նախաձեռնությունները ու դրան սահմանադրաիրավական հիմքերը ***Թեմա 8*** ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հիմնական գործառույթները – **վերջնարդյունք՝** ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձաժողովների կազմակերպման իրավա-օրենսդրական դաշտը, ***Թեմա 9*** ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովների կազմավորման կարգն ու գործառույթները – **վերջնարդյունք՝** ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձաժողովների կազմակերպման իրավա-օրենսդրական դաշտը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունից առաջինը անց է կացվում մագիստրանտի գրավոր կամ բանավոր պատասխանի, մյուսը՝ ինքնուրույն աշխատանքի ձևով: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է, որը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը համապատասխանաբար գնահատվում է առավելագույնը 4, 3 և 3 միավոր: Գնահատման քայլը 0,5 միավոր է:

**17/H34. Սահմանադրական մշակույթ** (3 կրեդիտ)

*Շաբաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի ուսումնասիրել պետության և հասարակության զարգացման պատմական ուղիում սահմանադրական մշակույթի ձեւավորման եւ

սահմանադրականության հաստատման հիմնախնդիրը՝ իշխանության սահմանափակման եւ իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից, վերջին հարյուրամյակների ընթացքում մշտապես գտնվել է գիտական հետաքրքրությունների եւ պետականաշինության կիզակետում: Սահմանադրության առկայությունն ինքնին որեւէ խնդիր չի լուծում: Էականը համարժեք սահմանադրական կարգի առկայությունն է, Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրական նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն դարձնելը, որի պարագայում միայն հնարավոր կլինի երաշխավորել իրավունքի գերակայությունը: Գերխնդիրը եղել ու շարունակում է մնալ հանրային կյանքի իրողությունները սահմանադրական լուծումներին ներդաշնակելը: Առարկայի նպատակն է ուսանողին տալ պատկերացում սահմանադրական մշակույթի դերի և նրա անցած ճանապարհի կարևորության մասին՝ իրավական պետականությունը կառուցելու և պահպանելու նպատակով:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** սահմանադրական մշակույթ հասկացության իմացաբանական բնույթն ու բովանդակությունը, դրա իրավափիլիսոփայական ընկալումները, դրա ձևավորման պատմական արմատները քրիստոնեական շրջանի հայ իրականության մեջ, ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր դերն ու նշանակությունը, կանոնական սահմանադրությունների իրավագիտական բնութագրիչները, սահմանադրականության երաշխավորման գլոբալ մարտահրավերները, սահմանադրության գերակայության երաշխավորման հրամայականը:

2. **Կկարողանան** ուսումնասիրել սահմանադրական մշակույթի ինստիտուտի հետազոտական մեթոդաբանությունը և զարգացման օրինաչափությունները, ինքնուրույն գնահատել իրավական, ժողովրդավարական պետության սահմանադրության ելակետային արժեքների մերօրյա ընկալումը, պատկերացնել ՀՀ սահմանադրական զարգացումների նոր փուլի հիմնախնդիրները, ներկայացնել հասարակական համաձայնության և հանդուրժողականության սահմանադրական ակունքները, անձի սոցիալական վարքագծի և իշխանության քաղաքական ու հանրային վարքագծի սահմանադրականացման հիմնախնդիրները, ազգային սահմանադրականության արժեբանական բնույնթն ու առանձնահատկությունները, սահմանադրական զարգացումների արժեբանական հիմնախնդիրներն արդի մարտահրավերների տեսանկյունից:

3. **Կտիրապետեն** սահմանադրության գերակայության երաշխավորման հրամայականին, նրան ներկայացվող արդի պահանջներին, սահմանադրական արդարադատության համակարգերի զարգացման միտումներին, սահմանադրական մշակույթի ազդեցությունը ժամանակակից սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությանը, սահմանադրական մշակույթի պատմական զարգացման փորձի կիրառմանը մերօրյա հիմնահարցերի լուծման տեսակետից:

**Բովանդակությունը.**

***Թեմա 1՝*** <<ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ – **վերջնարդյունք՝**

Ուսանողը թեմայի ավարտին կիմանա սահմանադրական մշակույթ հասկացության իրավափիլիսոփայական ընկալումները, սահմանադրության և սահմանադրականության փոխաառնչությունները տեսական առումով: ***Թեմա 2՝*** ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ– **վերջնարդյունք**՝ Ուսանողը թեմայի ավարտին կիմանա քրիստոնեական արժեհամակարգի ազդեցությունը հայկական իրականության մեջ, եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների պատմական ակնարկը, ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր ժողովներ լինելու հանգամանքը: Եկեղեցական ժողովներում համապարտադիր կանոնախմբերի ընդունման և իրավունքի բարձրագույն արժեք լինելու գիտելիքի տիրապետումը՝ որպես վերջնարդյունք: ***Թեմա 3՝*** ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԻՐԱՎԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ – **վերջնարդյունք** ՝ Ուսանողը թեմայի ավարտին կիմանա սահմանադրական մշակույթի կարևորումը եվրոպական արդի իրավամտածողության համակարգում: Ապա կտիրապետի սահմանադրական մշակույթի դրսևորման բնույթն ու առանձնահատկությունները հայ նոր իրականության պայմաններում, ինչպես նաև ժողովրդավարական պետության Սահմանադրության ելակետային արժեքների մերօրյա ընկալումները: ***Թեմա 4՝*** ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳԼՈԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ – **վերջնարդյունք**՝ Ուսանողը թեմայի ավարտին կիմանա սահմանադրականության երաշխավորումն որպես իրավական պետության չափանիշ լինելը, սահմանադրականության երաշխիքներն անգլ-ամերիկյա և մայրցամաքային իրավական համակարգերում, հասարակական համաձայնությունն ու հանդուրժողականության սահմանադրական ակունքները: Կտիրապետի սահամանադրականությանը նետված ժամանակակից գլոբալ մարտահրավերները ***Թեմա 5՝*** ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ – **վերջնարդյունք**՝ Ուսանողը թեմայի ավարտին կիմանա սահմանադրական վերահսկողությանը ներկայացվող ներքին պահանջները, արդի զարգացման միտումները, սահմանադրական դատարանների լիազորությունները, Սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի լուծումը որպես սահմանադրականության երաշխիք ***Թեմա 6՝*** ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՈՐԱԿ – **վերջնարդյունք**՝ Ուսանողը թեմայի ավարտին կիմանա սահմանադրական մշտադիտարկման հիմնական խնդիրները հասարակական վերափոխումների պայմաններում և սահմանադրական ախտորոշումը որպես համակարգային սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**06/H19. ՀՀ գործարարարական իրավունք** (3 կրեդիտ)
*Շաբաթական 4 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտին ներկայացնել Հայաստանի Հանրապետության և Գործարարական իրավունքը: Գործարարական իրավունքը ներկայացվում է, որպես համակարգային իրավունքի ճյուղ, ինչպես նաև որպես դասընթաց:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

• գործարարական գործունեության հիմնական հատկանշները,
• գործարարությամբ զբաղվելու համար անրաժեշտ պայմանները,
• գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտների առանձնահատկությունները,
• գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտների սնանկացման առանձնահատկությունները,
• գործարարներին պատկանող գույքի կարգավիճակի առանձնահատկությունները,
• պայմանագրի դերակատարությունը գործարարական հարաբերություններում
•գործարարական գործունեության ֆինանսավորման ու վարկավորման առանձնահատկությունները,
• ներդրումային գործունեության առանձնահատկությունները,
• արտաքին տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները

**2. կհասկանա**

• ապահովել տեսական ու գործնական գիտելիքների արդյունավետ կիրառություն,
• լուծել պրոբլեմային իրավիճակները,
• արդյունավետ հաղորդակցվել ոլորտում առկա խնդիրների շուրջ,
• կազմակերպել ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ քննարկում,

**3. կկարողանա**

- ՀՀ-ում մտավոր սեփականության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը:
- գործարարական գործունեության հասկացույանը և հինական հատկանիշներին,
- գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտների մասնակցության ձևաչափի առանձնահատկություններին քննարկվող հարաբերություններում

**Բովանդակությունը.**

